



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՍԱԿԱՆ

7. ՅԱՐԻ ՄԱՅԻՍ 1902 ԹԻԻ 5

ԲԱՐԵՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : ԵՅէ՛ հոգին չծարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մէին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

ժ. ՄԻՇԼԷ

ԲԱՅՈՒԱԾ Է՝ «ԱՆԱՀԻՏ» Ի

Չ Ո Ր Ր Ո Ղ

Տ Ա Ր Ե Շ Բ Ձ Ա Ն Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԻԿ ՊԷՏԻ Է ՎՃԱՐԵԼ

Այն բաժանորդները որ երրորդ տարուան բաժեզինը չեն վճարած, կը խնրենք հաճին անյապաղ վճարել զայն՝ եթէ կ'ուզեն որ այսուհետև շարուակեն Ասենիս ստանալ:

ԱԶԴԵՐ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

ԹԻՒ 1

ԱՆԱԹՈՂ ՅՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԹԱՐԴՄԱՆԵՑ
Ա. Զ.

Գին 1 ֆրանկ

ԹԻՒ 2

ԱԼՖԵՐՏ ՏԸ ՎԻՆԵԻ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԴՄԱՆԵՑ
Ա. Զ.

Գին 1 ֆրանկ



ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ

ՊԵՏԱԶՆՍՐԵՆ

Գին 1 ֆրանկ

Դիմել՝ M. A. YARDJANIAN
8, Rue des Lyonnats Paris.

ՎԱՀԱՆ ԹԷԿԵԱՆ

ԼՈԳՆՐ

Գին 3 ֆրանկ

Դիմել՝ M. VAHAN TÉKÉIAN
6, rue d'Arcole, Marseille.

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1902

ԹԻԻ 5

ԱՐԳԻ ՀԱՅԵՐԷՆԸ

o—o—o—o

Գրարարի եւ աշխարհարարի հին հարցը չէ անշուշտ որ պիտի վերակենդանացնեմ. այդ հարցը վերջնապէս լուծուած է : Այդ մասին Հայերս շատ գերազանց ենք Յոյներէն , որ , հակառակ մենէ շատ աւելի ազատ կացութիւն մը վայելելնուն , հին ու նոր լեզուի պայքարը իր ամենէն վայրագ սաստկութեանը մէջ կը յամառին դեռ պահել . — այն աստիճան որ Աւետարանի նոր յունարեւելոյ թարգմանութեան վերջերս կատարուած փոքր արիւնահեղութեանց պատճառ եղաւ եւ Թէոթոքիսի դահլիճին տապալումն առթեց : Այսօր , մեր մէջ եթէ մէկը ելլէր գրաբարը իբրեւ գրական լեզու գործածելու վարդապետութիւնը քարոզէր կամ նոյն իսկ գրաբարախառն աշխարհաբարը ջատագովէր , անգրջրհեղեղեան անապուռնի մը տպաւորութիւնը պիտի թողուր եւ արհամարհոտ քրքիջէ մը ուրիշ պատասխան պիտի չընդունէր : Այսօր բոլոր Հայերը համաձայն են թէ գրաբարը պէտքէ յարգել ու սիրել , իբրեւ անգին աւանդ մը զոր մեր հայրերը մեզի թողած են , բայց թէ մեր արդի գրականութեան համար պէտք է գործածել միմիայն աշխարհաբարը , եւ զուտ աշխարհաբարը , որ կը հիմնուի Թրքահայոց մէջ՝ Պոլսոյ բարբառին վրայ , եւ

Ռուսահայոց մէջ՝ Թիֆլիսի բարբառին վրայ : Ռ. Պէրպերեան եւ Յ. Գուրգէն իսկ , որ գրաբարախառն աշխարհաբարի ամենէն մոլեգին ախոյեաններն էին դեռ սակից հինգ տասը տարի առաջ , այժմ կը գրեն ամենամաքուր աշխարհաբարով մը . եւ «Բազմավէպ»ը , որ տակաւին երկու տարի առաջ այլանդակօրէն մաքարոնիկ լեզու մը կը գործածէր , այժմ զգալի ձգտում մը ցոյց կուտայ աշխարհաբարի կանոնները յարգելու , եւ իր գլխաւոր խմբագիրներէն մէկը , Հ. Ղազիկեան , եւրոպական գրականութեան մեծ էջերու թարգմանութեանց մէջ երեւան կը բերէ աշխարհաբար մը որ ոչ միայն տարօրինապէս գերազանց է Մխիթարի վրայ իր համաբաւար «տեսթան»ին թափթըփած լեզուէն ու իր Տանթէի կամ Գորէի հասուածներու նախկին թարգմանութեանց դեռ խառնակ աշխարհաբարէն , այլ եւ ամենէն մաքուր , ճկուն , վայելուչ ու ճոխ աշխարհաբարներէն մէկն է զոր ունեցած ըլլանք երբեք :

Բայց եթէ աշխարհաբարի անկասկածեան հաստատումը կատարուած իրողութիւն մըն է այլեւս , անոր ներքին կազմակերպութիւնը դեռ ունի՝ կարգ մը մանրամասնութեանց մէջ՝ վիճելի կէտեր : Ատոնց մասին է որ կ'ուզեմ մէկ քանի նկատողութիւններ ներկայացնել :

Աշխարհաբարը զոր այսօր կը գործածեն արեւմտեան բոլոր գրողները , այն լեզուն է զոր «Մասիս»-«Հայրենիք»ի գրական խումբը կազմաւորեց եւ տիրական դարձուց վերջնապէս : Այդ աշխարհաբարը , որքան ալ քերականական

կազմածքին մէջ բացարձակ միութիւն ունեցած ըլլար, մանրամասնութեանց տարբերութիւններ կը ներկայացնէր արդէն՝ «Մասիս-Հայրենիքի գրողներուն լեզուական ու գրական դաստիարակութեան անհանգիտութեանց համեմատ: Այդ տարբերութիւնները, որոնք կը մնան զեռ, եւ այդ գրողներէն ոմանց՝ ինչպէս եւ իւրենց հետեւողներուն մօտ շեշտուած են, կ'արժեն քննութիւն: Տարբերութիւնները կը կայանան այն չափին մէջ որով իւրաքանչիւր գրողի ժողովրդական լեզուին ինքնատիկ էական կանոններուն ու ձեւերուն հպատակելով հանգերձ տարբեր կը պահէ գրաբարի, տաճկերէնի եւ ֆրանսերէնի ազգեցութենէն — որոնք արեւմտեան աշխարհաբարի կրած երեք մեծագոյն արտաքին ազգեցութիւններն են:

Գրաբարին աշխարհաբարի վրայ ազդեցութեան չափին մէջ է որ տարբերութիւններն ամենէն աւելի մեծ են: Ոմանք շատ անժուժիակ են գրաբարէն փոխառութիւն ընելու մէջ, եւ ուրիշներ չափազանց զգուշաւոր. այսպէս՝ ոմանք գրաբարի հոլովմանց ընդարձակ պէս պիտութենէն կ'ուզեն շատ բան առնել աշխարհաբարին մէջ, եւ ուրիշներ չափազանց սեղան կը հասցնեն հոլովմանց պարզումը. կան որ «զեռք, զեռոց, մարգաց, ալեօք, աչօք, թագմանէ, կրիւք, երկնից, կրօնից»ի պէս ձեւեր կը գործածեն, հոլովմանց մէջ «ոյ»ը «ու»ի կը փոխեն, «ի»ն, «ու»ն եւ «եա»ն միշտ կը սըղեն, նոյն իսկ «է»ն «ի»ի կը փոխեն («յոյս, յուսոյ, բիբ, բբի, փուչ, փշի, ատեան, ատենի, պարտէզ, պարտիզի» կը գրեն), իսկ ուրիշներ «ի»ն եւ «ու»ն միշտ կը պահեն («գիծ, գիծի, վիզ, վիզի, սուր սուրէ»), սիստեմաբար կը վերտարեն «ութիւն»ով եւ «ուս»ով վերջացող բառերուն գործիականի «եամբ» եւ «մամբ» ձեւին գործածութիւնը: Երկու չափազանցութիւններն ալ դատաւարտելի են. անհրաժեշտ է աւելի ընարողականութիւն ցոյց տալ, ընարողականութիւն մը որ քնակահարար աշխարհաբարի հիմնական օրէնքներուն ու ոգիին միշտ հաւատարիմ մնայ: Ծիշք է որ աշխարհաբարը պարզած է գրաբարի հոլովմանց ծայրայեղ զանազանութիւնը, բայց եւ գեռ բաւական պահած է այդ բազմաձեւութենէն. ինչ որ ժողովուրդը պահած է՝ գրագետներն իրաւունք չունին ջնջելու. հոլովման բացարձակ ժխտելութիւնը զոր պ. Չեքազ փորձեց, անմիջական վիժման յանգեցու, որովհետեւ անբնական քայլ մըն էր: Պէտք է ուրեմն դարձածել հոլովման ան բոլոր ձեւերը զոր այժմեան խօսուած աշխարհաբարը, եւ մասնաւոր անոր հիմքը կազմող Պոլսոյ բարբառը, պահած է:

Ժողովուրդը կ'ըսէ «արդարութեամբ, զգացմամբ, զգացման», ինչպէս եւ «արդարութիւնով, զգացումով, եւ զգացումի» . երկու ձեւերն ալ պէտք է գործածել ուրեմն՝ տեղին համեմատ: Հոլովման ընդհանուր կանոն պէտք է համարել «հաց, հացի, հացը, հացէ, հացով, հացիք, հացերու, հացիքէ, հացերով» ձեւը, եւ միւս բոլոր հոլովման ձեւերը որոնք պակասում են խօսուած լեզուին մէջ իբրև զարտոնողութիւններ ընդունելի եւ գործածել («ծովու, տաբուան, քրոջ, պատուոյ, աղջկան, սղու, եւն»), — որովհետեւ հայերէնի ձեւութեան, ներդաշնակութեան եւ ճապկութեան տարբերէն մէկն է հոլովմանց պէսպիսութիւնը: Երբ աշխարհաբարի բառարան մը յօրինուի, — ամենէն անհրաժեշտ աշխատութիւններէն մէկը որ ինչ չէ կատարուած, — այդ բառարանին մէջ ամէն բառի քով պէտք է նշանակուի իր կանոնաւոր կամ անկանոն հոլովուելը, եւ եթէ անկանոն իր հոլովման մասնաւոր ձեւը, կան հոլովման կանոններ ու ձեւեր որոնք աշխարհաբարէն վերջնապէս վտարուած են. «է»ն այլեւս երբեք «ի»ի չպիտի փոխուի («հանդէս, հանդէսի» պիտի ըսուի, եւ երբեք «հանդիսի») բաց ի «սէր» բառէն որ միակ բացատրութիւնն է («սիրոյ, սիրով»). «եա»ն այլեւս երբեք պիտի իր «ա»ը չկորսնցնէ, «ոյ»ը երբեք «ու»ի չպիտի փոխուի («պատեան, պատեանի» եւ «գոյն, գոյնի» պիտի հոլովուի միշտ): Բայց կան ուրիշ բառախումբեր որոնց մէջ կանոնի միութիւն անկարելի է պահանջել՝ աշխարհաբարին արդի կացութեանը մէջ՝ առանց զայն մէկ կամ միւս տեսակ խորթութեան մէջ ձգելու. այսպէս՝ կարելի չէ ընդհանուր կանոն սեպել «ու»ին եւ «ի»ին մշտական ջնջումը, ոչ ալ անոնց մշտական պահպանումը. ճշմարիտ է որ Հայաստանցիք մեծ մասամբ, եւ ուրեմնայք ամբողջութեամբ, միշտ կը ջնջեն «ի»ն եւ «ու»ն. բայց Պոլսոյ բարբառին մէջ անոնք յաճախ կը պահպանուին, եւ այդ պահպանումը Պոլսոյ բարբառին յատկանիշներէն մէկն է. Պոլսոյ բարբառը արեւմտեան հայերէնին հիմունքը կազմելով, անոր բոլոր մասնայատկութիւնները իրաւունք ունին օրէնքի կարգ անցնելու, երբ մասնաւոր այդ յատկանիշները ուժի եւ գեղեցկութեան տարբեր են. «ու»ին եւ «ի»ն սղումը ուրիշ արդիւնք չ'ունենար բայց եթէ բազմապատկել զանգաղ «ը»ը, որ արդէն, ծանր «ա»ին հետ, այնքան ճանճրանալիօրէն տիրական տեղ մը կը բռնէ հայերէնին մէջ («փուչ, փշի, սուրբ, օրբբի, ծիր, ծիրէ»): Պոլսոյ բարբառը «ը»ին տեղ կը նախընտրէ սուր ձայնաւորները պահել, եւ

ներու, ներէ, ներով) : Պէտք չէ սակայն՝ ըստ իս՝ բոլորովին վտառել գրաբարի «ք»ն, կան պարագաներ ուր ժողովրդական լեզուին ոգւոյն հակառակած չենք ըլլար, եւ միանգամայն աշխարհաբարին հրապոյրն աւելցուցած կ'ըլլանք, «ք»ն գործածելով . այսպէս՝ ազգերու անուններուն համար . կարելի է ըսել «Հոովմայեցիք, Հայք, Պարթեւք, Յոյնք, Հոովմայեցոց, Պարթեւաց, Յունաց, Հայոց, Հայոցմէ» ինչպէս եւ «Հոովմայեցիներ, Հայեր», եւն : Պատմական գրուածքներու մէջ, երբ շատ մը ազգի անուններ ետեւէ ետեւ կը յիշուին յաճախ, անտանելի է «ներ»երուն կրկնութիւնը, եւ գրաբարի հոլովման ձեւին գործածութիւնը խորթ չէ բնաւ այդտեղ : Եոյնպէս «ութիւն»ով եւ «ում»ով վերջացող բառերը յոգնակիրն մէջ կրնան հոլովուիլ երկու ձեւովն ալ «անդիսութիւնք» ինչպէս «հանդիսութիւններ», «հանդիսութեանց» ինչպէս «հանդիսութիւններու», «զգացումներու» ինչպէս «զգացմանց» (բացառականին եւ գործիականին մէջ միշտ կը հոլովուին «զգացումներէ, զգացումներով, հանդիսութիւններէ, հանդիսութիւններով», եւ երբեք գրաբար ձեւովը) : Կան արդէն խել մը բառեր՝ աշխարհաբարի մէջ յաճախ գործածուած, որոնք «ք»ն անհրաժեշտօրէն պահած են, «անոնք, որոնք, մերոնք, Յակոբնք, քուրըտիք, աղբրտանք, այլք, ոմանք, տղաք, տղոց, եւն : Անեզական բառերը աշխարհաբարի մէջ եզակի են միշտ, եւ իրենց յոգնակիրն կ'ունենան . հետեւաբար աններելի է այդ բառերը գրաբարի ձեւով հոլովել . կարելի չէ երբեք ըսել «երկնից, դժոխոց, հաւատոց, պարձանաց» . պէտք է միշտ ըսել «երկնքի, երկնքներու, հաւաքքի, հաւաքքներու», եւն : Հայցականի «զ»ն ջնջուած է աշխարհաբարի մէջ, ու մնացած է միմիայն էական ու յարաբերական դերանուններուն մէջ . արդ, ոմանք դեռ էական ու յարաբերական դերանուններէն զատ ուրիշ բառերու մէջ ալ կը գործածեն զայն (կ'ըսեն՝ զԱստուած, զմարդը, զԱրամ, եւն) ուրիշներ ալ էական եւ յարաբերական դերանուններէն իսկ կը վտարեն զայն (կ'ըսեն «ան» սիրեցի, «ինքը» տեսայ, «անոնք» առաջնորդեց) . երկու կողմէն ալ կը սխալին . պէտք է միայն էական եւ յարաբերական դերանուններուն մէջ գործածել «զ»ն, բայց միշտ գործածել անոնց մէջ . (ըսել՝ «զայն, զանիկա, զանոնք, զինքը, զիրենք տեսայ . զիրար, զոր, զորոնք սիրեցիրք» . զիս ճանչցաւ», եւն . (միայն «մենք, գուք, դուն» դերանուններուն հայցականը լաւագոյն է առանց «զ»ի գործածել՝ «մեզ, ձեզ, քեզ», որոնք միմիայն հայցականի համար պիտի գործածուին, տրականի ու սեռականի վերապահ-

ւելով «մեզի, քեզի, ձեզի» ձեւերը . ոտանաւորի մէջ կարելի է թերեւս ներել՝ «զմեզ, զքեզ, զձեզ»ի գործածութիւնը) :
 Նախադրութիւններն ընդհանրապէս ջրնջուած են աշխարհաբարին մէջ . անոնց տեղ՝ բառերը կը հոլովուին, կամ վերջադրութիւններ կը գործածուին . «առ ընկեր»ի տեղ «ընկերջ», «վասն մանկան»ի տեղ «տղուն հահամար», «ի տան»ի տեղ «տան մէջ», եւն . բայց այս պարագային մէջ ալ պէտք չէ որ կանոնը անողոք ըլլայ . կան պարագաներ ուր նախադրութիւններէն մէկ քանին կարելի է, նոյն իսկ պէտք է գործածել : Այսպէս կարելի է ըսել «իբ ողջոյնն ուղղեց առ Յրանաս» կամ «Յրանասային», «իբ պարտքն առ մարդկութիւն» կամ «մարդկութեան», «ընդ նախագահութեամբ» կամ «նախագահութեան տակ», «ըստ այդ գրողին» կամ «այդ գրողին համեմատ», «Յրանասայի մէջ» կամ «ի Յրանաս» : Նախադրութիւնները բոլորովին վտարողները կ'աղքատացնեն աշխարհաբարը, իսկ կան ալ որ վանոնք կը գործածեն այնքան որքան աշխարհաբարի ոգին չի հանդուրժեր . (կ'ըսեն՝ օրինակի համար՝ «ի տան, ընդ յարկաւ, ըստ հաճոյս, առ Տիգրանաւ . ի Հայս», եւն) :
 Գալով բառերուն, կարելի է գործածել այն բոլոր բառերը զոր հին հայերէնը մեզի թողած է, ոչ միայն արդի խօսուած լեզուին մէջ մնացածները՝ որոնք կենդանի բառեր են ուրեմն, այլ եւ գործածուելէ դադրած, հին գրքերուն մէջ միայն պահպանուածները : Այն բառերը, որոնց աշխարհաբարը տարբեր իմաստ մը տրուած է, («չատ» գրաբարի մէջ assezt, աշխարհաբարի մէջ beaucoup . «սուզ» գրաբարի մէջ court, արեւմտեան աշխարհաբարին մէջ cher . «գէշ» գրաբարի մէջ cadavre . աշխարհաբարի մէջ mauvais . «հանճար» գրաբարի մէջ intelligence, աշխարհաբարի մէջ genie, եւն) իրենց նոր իմաստով միայն պէտք է որ գործածուին :
 Անվիճելի է որ պէտք է միշտ նախամեծար համարել խօսուած լեզուին մէջ գործածութեամբ պահպանուած բառերը, ինչպէս եւ զուտ ռամկական ու գաւառական բառերը՝ գործածութենէ զուրկած ու հին գրքերու մէջէն միայն մեզի հասած բառերէն, որովհետեւ առաջիններն աւելի կեանք կը պարունակին, աւելի յստակ ու արագ, հետեւաբար եւ աւելի գեղեցիկ կերպով կ'արտայայտեն մասնու մը . «աղւոր, անուշ, բոպիկ, նիհար, ցատքել, մոխիւր, կտրիճ, ճղղած, աղօթբան, աստու, մութ, կրակ, շոյել, ապուշ» աւելի ուժով ու վճիտ են քան «գեղեցիկ, քաղցր, բոկոսն, վտիտ, ոստնուլ, աճիւն, երիտասարդ, ազազուն, այգ, առաւօտ, ի աւար, հուր, փայլիայել, պանդոյր» : Աշխար-

հարարի յատուկ անանցները, բարդութիւնները եւ ուրիշ բանի կամ բայի մասնաւոր ձեւերը միշտ նախընտրելի պէտք է որ ըլլան նմանապէս՝ քան զբարարի նոյնանշան ձեւերը։ Լաւագոյն է «հարիւրգլխանի, արծաթէ, պղնձէ, մէկհատիկ աչքիպուկ, ձեռնցպար, բոլորպար, մունջխեղզ, մեռելկոխ, բերանփոխ, սիրտհատնում, սրտմաշուք, մեծկակ, մանտրտիկ, սիրունկէկ, նիհարկէկ, մարդավարի, անառակվարի, մազթափ, չըսուելիք, չտեսնուած, խենթենալիք, շուարեցնող, խոյս տալ թող տալ, ցոյց տալ, ման գալ, ժուռ գալ, խօսք տալ, քարշ գալ, թունդ ելլել, թափ տալ, պար գալ, ցատքբռնել, պատռուել, կոտորակ, քակրտուիլ, քիչ մը, պզտիկ մը, պուտ մը, կէս մը, աղէկ մը» քան թէ՝ «հարիւրգլխան, արծաթեայ, պղնձէ, միամօր, ձեռնապար, բոլորապար, բաւական մեծ, մանրիկ, բաւական սիրուն, քաղաքավար, անառակօրէն, հերաթիփ», եւն, եւն, Բայց գրքի բաները, բոլորն ալ, իրաւունք ունին գործածուելու, երբ պէտքի մը կը համապատասխանեն․ անոնց մէջ կան, — չատ բաղմաթիւ, — որ անհրաժեշտ են, որովհետեւ իրենց համարմէքը չունին աշխարհաբարին մէջ, ինչպէս՝ գրեթէ բոլոր վերացեալ բաները, բարձր քաղաքակրթութեան ասացուածքներն ու բացատրութիւնները։ Կան ալ որ թէպէտ ունին իրենց համարմէքը աշխարհաբարին մէջ, բայց դարձեալ կրնան գործածուիլ․ ոչ իրրեւ մակաբոյժ հոմանիշ եւ՝ այդ պարագային՝ անկենդան եւ անիմաստ, այլ ստանալով նոր երանգ մը, նոր շեշտ մը, որ զիրենք տարբերէ իրենց աշխարհաբար հոմանիշներէն եւ իրենց որոշ տեղն ու գերը ճշգէ․ այսպէս՝ աշխարհաբար «անուշ» բառին հետ այսօր կը գործածենք «քաղցր», «դաշն», «մեղմ» հին բառերն ալ։ «հով»ին հետ «հողմ, քամի, զեփիւռ, սիւք», «կապոյտ»ին հետ «ծաւի, խաժ», «մաղ»ին հետ «ծամ, վարս, հեր, զիսակ», «մութ»ին հետ «խաւար, աղջամուղջ, ստուեր» եւն, Բայց կը ջանանք, — կամ գոնէ պէտք է ջանանք, որովհետեւ բաղմաթիւ չեն ջանացողները, — այդ հին բաներուն տալ նոր եւ ուրոյն ուժ մը, շեշտ մը, երանգ մը որպէս զի անոնք աւելորդ եւ սլաղ կրկնութիւնը չըլլան ուսմական բանին, այլ անոր յարակից իմաստներն արտայայտեն։ Այդ հին բաները կրնան գործածուիլ վերջապէս, եւ ուրոյն իսկ նախընտրելի են, գրական յարձր սեսերու մէջ․ գիւցազներգութեան, ողբերգութեան, քնարերգութեան համար՝ յաճախ աւելի պատշաճ են անոնք, եւ աւելի կենդանի (քանի որ իրենց տեղն են եւ պէտք մը կը գոհացնեն) քան ուսմիկ բաները, որոնք քնքո՛ւ, վառվառուն, կտրուկ, գունագեղ

են, բայց յաճախ չունին վեհութիւնը եւ լայնութիւնը հին բաներուն։ Ինչ ալ ըլլայ սեռը պէտք է խուսափիլ հին բաներու չափազանց շոտլու եւ անիմաստօրէն առատ գործածութենէն․ անոնք կը նմանին դոհարներուն ու նուրբ հագուստներուն, մինչ աշխարհաբար իր բաներովն ու քերականութեամբը՝ մարմինն է․ նուրբ հագուստներն ու գոհարները, մեծ երեկոյթներու մէջ, անհրաժեշտ են, բայց պէտք չէ որ բոլորովին ծածկեն, խեղդեն, թաղեն մարմինը։ Եւ արդէն պէտք է այդ հին բաները միշտ այնպէս մը գործածել որ «նոր» թուին, «երիտասարդանան», ինչպէս եւ կարելի է ամենէն ուսմիկ բաները այնպիսի կերպով մը կիրարկել որ իրենց գոհեցուցիչութիւնը թօթափեն, «աղնուանան»․ հող՝ արդէն լեզուի խնդրէն զուրս կ'ելլենք, ոճի, գրական արուեստի ոլորտը կը մտնենք․ սակայն՝ առանց ոճի մշակման, առանց «գեղեցկագիտական ձգտումներու», լեզու մը չի կրնար զարգանալ՝ եւ ատոր համար է որ լեզուի մը զարգացումը կը կատարուի աւելի զբազէտներու քան քերականագէտներու ձեռքով)։ Անհրաժեշտը այն է որ գրադէտին ճարտար չափադիտութեամբը բոլոր բաները, գրաբան, ուսմական ու դաւաճական, ամենքն ալ նոր ու կենդանի ըլլան եւ իրարու հետ ներդաշնակուին կան՝ որինսակի համար, պարագաներ ուր ուսմական ու զասական լեզուի տարրերը չեն կրնար համաձայնիլ․ այսպէս ուսմական լեզուի որոշ կնիքը կրող բաները մեծ մասամբ չեն կրնար զբարարի ձեւերով անանցուիլ ու բարդուիլ, կամ գրաբար մասնիկներու ընկերանալ՝ առանց խորթութիւն յառաջ բերելու․ կարելի չէ գրել «խեղճասէր, զէվզէկանալ, պզտիկանալ, արցունքալից, լիսպրկունք, սեւաընքուի, չղրճուկաբար, խենթական, խնդումառիթ, անհասունութիւն, կամացօրէն, բարակօրէն, շխտօրէն, արցունքալից», եւն․ պէտք է ըսել «պզտիկանալ» կամ «փոքրանալ», «արցունքոտ» կամ «արտասուելից», «լիաշուրթ», «սեւայօն», «ղճճաբար» կամ «չղրճուկ կերպով», «յիմարական» կամ «խենթի պէս», «բերկրասիթ», «անուպասօրէն», «յամբօրէն» կամ «կամաց մը», «նրբօրէն», «անվայելչապէս», «արտասուագին», եւն։ Այնչոյտ կարելի է՝ երբեմն՝ ուսմիկ բան մը գրաբար մասնիկի մը կցել, բայց մասնաւոր պարագաներու մէջ միայն, իբր զարտուղութիւն, որոշ «արդիւնք» մը ստանալու համար այդ անհաշտ տարրերու գիտումաւոր գուղապրութենէն։

Փրանսերէնի պղծեցութիւնը շատ կարեւոր եւ շատ օգտակար եղած է աշխարհաբարին : Քրանսերէնին չփռւմը ազգած է մեր աշխարհաբարին համաձայնութեանը վրայ, եւ զայն մասամբ ազատած է թրքական կնճարտ, բաղմակու տակ, մանուածապատ ֆրագաշինութիւնէն որուն վրայ կազապարուած էր առաջ, եւ անոր տուած է թեթեւութիւն, յտակութիւն եւ վաշխչութիւն : այդ շիւտմը ազգած է նաեւ աշխարհաբարի բառարանին վրայ : շատ մը բառեր գործնուած են ֆրանսերէն բառերուն հետեւողութեամբ եւ նրբացուցած ու ճոխացուցած են արեւմտեան հայերէնը, երանգներ արտայայտելու կարող են գարձուցած զայն : — մանաւանդ որ իւրաքանչիւր բառի որոշ ու միակ գործածութեան տեղը ճշգրտու, համանշտ բառերուն իսկ բարակ տարբերութիւնները որոշելու (կամ ստեղծելու) ձգտումը, զոր ունի ֆրանսերէնը, սկսած է անցնել մեր աշխարհաբարին մէջ : այսպէս, փոխանակ գրելու ինչպէս մեր նախահայրերը կը գրէին Պոլսոյ կամ գաւառներուն մէջ՝ «Անզգամ Ըլլալը գիտցած մարդուց նետ յարարերութիւն ունկնարով» միշտ վնաս կրելու տեղը՝ անկից հետո կենալով վրտխս փորձանքէ ազատ պահելու ինչպէս թիւնն ունենալը աւելի ազէկ կը սեպեմ» : մենք այսօր կ'ըսենք՝ «Փոխաձգակ միշտ վնաս կրելու» յարարերութիւն ունկնարով այնպիսի մարդոց հետ որոնց անզգամ Ըլլալը գիտեմ, նախամեծար կը համարեմ անկից հետո կենալով գլուխս փորձանքէ ազատ պահել» : Փոխանակ մեր նախահայրերէն շատերուն պէս բառերը գործածելու անխօսի, անգնց իւրաքանչիւրին գրոշ ու միակ տեղ մը կուտանք, ու հոմանիշներուն մէջ կը ջանանք երանգի տարբերութիւնը գտնել կամ հաստատել : «ստուեր, շուք, հովանի, մութ, մթութիւն, խաւար, աղջամուղջ» բառերը այսօր որոշն նշանակութիւններ սկսած են ունենալ : նորամուծութիւն (innovation), քմայք (fantaisie), օթեակ (loge), եզերել (border), քաղաքաուս (hotel de ville), հանրապետութիւն (république), թատերագի (dramaturge), երկաթուղի (chemin de fer), ցայտերդ (sérénade), ցուցահանդէս exposition) եւն ֆրանսերէն բառերու վրայ կազապարուած բառեր են, որոնք այլեւս լեզուին մէջ անցած են ու պիտի մնան՝ որովհետեւ յաջողապէս դարբնուած են ու պէտքի վը կը համապատասխանեն :

Այս բոլորը օրինաւ որ եւ օգտակար են եղած եւ պիտի մնան : «Հայրենիք»ի գրական խումբը որ ֆրանսական ազգեցութեամբ մեր աշ-

խարհաբարը զարգացնելու գործին մէջ ամենէն վճռական եւ հզօր դերը կատարեց՝ շարունակելով եւ աւարտելով Մամուրեանի, Միսաքեանի, Ոսկանեանի, Գ. Օսեանի, Թէրզեանի, Կ. Ի. Թիւնեանի, Տէմիրճիպաշեանի ճիւղերը, առով մեծ ծառայութիւն մը մատուց մեւ նոր հայերէնին : անոնք որ լեզուին կրած քիչ կերպարանափոխութեանը դէմ բողոքեցին զայն ազաւազում մը նկատելով, կը սխալէին : աշխարհաբարը ֆրանսերէնով զարգացնողները նոյն ատեն դերը կը կատարէին զոր կատարեցին Ե. Խարու գրողները՝ հին հայերէնը յունարէնի եւ ասորերէնի ազգեցութեամբ ճոխացնելով : Եզնիկին, Աստուածաշունչի եւ Ոսկեբերանի թարգմանութեան հայերէնը հրաշալի է ճիշդ անոր համար որ ոսկեղարու հայ գրողները բարձրադոյն քաղաքակրթութեան մը ներկայացնող յունարէնին խորին ներդրողութիւնը կրած էին եւ անկից զչ միայն փոխառին բազմաթիւ բառեր, ու շատ բառեր ալ թարգմանօրէն հայացոցին, այլ եւ փոխառին բացատրութիւններ, գարձուածքներ, համաձայնութեան նրբութիւններ, քերականական ձեւեր : լատիներէնը իր ցերագոյն զարգացմանը հասնելու համար, շատ բան փոխ առած է նմանապէս յունարէնէն : Օտար լեզուի մը ազգեցութիւնը այն ատեն միայն վնասակար կը զտնայ երբ այդ ազգեցութիւնը կրող լեզուն նոյնութեամբ «կ'օրինակէ» այդ օտար լեզուն, ինքզինքն ստրկաբար կը կաղապարէ անոր վրայ, եւ անկից կ'առնէ նոյն իսկ այնպիսի տարրեր որոնք անոր մասնայատկութիւններն են եւ չեն կրնար փոխ առնուիլ : այսպէս Դաւիթ Անյաղթի եւ Մագիստրոսի լեզուն, հայերէնի ոչ ոքին հետ անհաշտ յունարանութիւններով խճողուած, եւ Կիլիկիոյ Ունիթոններուն լատիներէնով աղաւաղուած հայերէնը կը ներկայացնեն օտար լեզուի մը օգտուելու այդ սխալ ըմբռնումը, չարաչար գործածումը : այս պատճառով է որ այդ հեղինակներուն լեզուն չէ տարածուած, արմատ չէ ձգած, չէ ազրած : աշխարհաբարը ֆրանսերէնով վերանորոգողներուն մէջ ալ եղած են դմանք որ, երբեմն, ֆրանսերէնէն պոած են աւելի քան ինչ որ կարելի է, — նոյն իսկ գաղղիաբանութիւններ բառ առ բառ հայերէն թարգմանած են, կամ ֆրանսերէնի քերականութիւնէն ու համաձայնութիւնէն պոած են այնպիսի տարրեր որոնք չեն ներդաշնակուիլ մեր լեզուին ողւաջն հետ : Այդ չափազանցութիւնները չեն ընդհանրացած, չեն տեւած, եւ արդէն շատ քիչ տեղ բռնած են մեր աշխարհաբարի վերանորոգման ճիւղին մէջ որ իր ամբողջութեամբ

անողջ և անպատեհ եւ բեկտու է եղած : Պէտք է նիւնտել թէ ինչ Յր մաքրամտունքը կը գտնուած ընդ ինչ «Հայրենիք» ի աշխարհաբարին մէջ : յաճախ պարզապէս հետեւողութիւն մըն է : հարկաւոր եւ օգտակար, արտայայտութեան աւելի բարձր, աւելի նորը, աւելի իրիտ ու ամփոփ ձեւի մը, որ Ֆրանսերէնըն միայն յատուկ չէ, այլ եւրոպական բոլոր մեծ լեզուներուն, աւելի «գրական» նմանողութիւն մըն է քան զուտ լեզուական . եւ լեզուին ինքնութիւնը չհզօանելու պատրուակով եթէ այդ հետեւողութիւնէն ետ կենսայինք մեր, աշխարհաբարը, հիմնուելով միայն խօսուած լեզուին ֆրազներ շինելու եւ զանոնք իրարու կապելու եղանակին վրայ, պիտի մնար ուսմիկ, աղքատ ու դանդաղ ձեւի մը մէջ, բարձր գաղափարներ, նորը տպաւորութիւններ արտայայտելու, ոճի մեծ գեղեցկութիւններ յառաջ բերելու, մտածմանց ընդարձակ ընդլայնումներ եւ բարդ կապակցութիւններ յորինելու անկարող : Ինչպէս յատուկ է 1830ին Տր. Կրիմի թարգմանած Աստուածաշունչին, «Ռոպէնտոն»ը, «Պողոս եւ Վիրգինիա» ի թարգմանութեան աշխարհաբարը «Աբրա Դոնաթիան» ի թարգմանութեան կամ Հ. Նալիկեանի վերջերս հրատարակած Օտտիանի թարգմանութեան հոյակապ աշխարհաբարին հետ, անաջինները կը ներկայացնեն լեզու մը շատ կենդանի, շատ հարագատ, «խօսուած լեզու», բայց լեզու մը տարօրինակ և աղքատ, դանիկ ու անփակ : Աստ Լածաշունչին վեհ ոճը այդ թարգմանութեան մէջ չուկայցի խօսակցութեան գնացք մը ունի. այսօրուան ֆրանսական լեզուի «գեղեցկագիտութեան» աղքատութեամբը ճօնացած աշխարհաբարը, իր խորքին մէջ նոյնքան հարագատ, նոյնքան «աշխարհաբար» ըլլալով հանդերձ որքան Տր. Կրիմիը, անշուշտ աւելի անփակ է վերարտադրելու քնարեղական գեղեցկութիւնը Նասիլի, Դաւիթի կամ Յորի ոճին : Մեր ոսկեգարու թարգմանիչներն ալ Աստուածաշունչին թարգմանութեան հոյակապ հրաշակերտը պիտի չկարենային արտագրել, եթէ շատանային լեզուական այն տարբերութիւնները որ Գողթան երգերուն մէջ կը գտնէին, եթէ օգտուած ըլլային Հոմերի եւ Պլատոնի լեզուին մեծ գեղեցկութիւններէն : Կեղու մը երբեք ինքնութիւնը չի կորսնցնէր՝ բարձրագոյն զարգացում ունեցող լեզուի մը գեղեցկագիտական առաւելութիւնները իւրացնելով, երբ գիտէ իր փոխ առածը իր նկարագրին համաձայնեցնել, զայն իր ուրոյն կնիքովը գրողմել, եւ երբ կը խուսափի փոխ առնել այնպիսի տարբեր որոնք անհայտ են իր

ողբոյն հետ, կամ անպէտ են քանի որ անոնց համարժէքը կայ արդէն իր մէջ, ասով, ընդհանրապէս լեզու մը իր ինքնութիւնը կ'ընդարձակէ եւ կ'ամրացնէ, քանի որ բոլոր փոխանունած զարգերն ու ճոխութիւնները ուրիշ բանի չեն շժառայեր բայց եթէ գեղեցկացնելու եւ զօրացնելու իր անձնաւորութիւնը, զոր միշտ կը պահէ եւ պէտք է պահէ, իր բնիկ, ինքնաբուն հանգամանքը, որ միշտ ողնայաբար, հիմը, խորքը կը մնայ ամբողջ կողմած չին : Ես կը կարծեմ թէ մեր աշխարհաբարը նոյն իսկ զեւ չէ առած ֆրանսերէնէն այն բոլոր տարբերը զոր կրնայ անուել : Կայ տարբեր մանաւանդ, որմէ շատ քիչ ենք օգտուած — այն է բաներու տարբեր : Ռուսականիչը, որ ֆրանսերէնին «գեղեցկագիտական» ներգործութիւնը շատ քիչ կրած է տակաւին, — եւ գլխաւորապէս այդ պատճառով է որ շատ նուազ ճկուն եւ ճոխ է քան արեւմտեան աշխարհաբարը, — բաներու փոխառութեան մէջ աւելի յանդուգն է եղած : Իրաւ է որ ան ալ այդ փոխառութիւնը այնքան ալ լայնակ ծայրացելու թեան մը հասուցած է որքան արեւմտեան հայերէնը՝ անկից գրեթէ տարամերժօրէն խուսափելու ձգտումը : Ռուսական ֆրանսերէն բաղաձայն բաներ (եւ անոնց ալ գերմանացած կամ ռուսացած ձեւը) կը դորձածեն յաճախ, երբ այդ բաներուն համարժէքը մեր լեզուին մէջ ոսկեգարէն ի վեր գոյութիւն ունի կամ շատ դիւրաւ կրնայ դարձուիլ մեր լեզուին ընծայած տարբերով : Այսպէս՝ բոլոր վերացեալ բաները (ռուսականք կ'ըսեն «պիտոլոգիա» պետագոխիա, անպարտաւոր, կրիտիկա, պօէզիա), եւն, փոխանակ «հոգեբանութիւն», մանկավարժութիւն, բարեխառնութիւն, բանաստեղծութիւն» ըսելու) . իսկ մինչ շատերը զեւ կը յամառին հայացնել այնպիսի բաներ որոնք ֆրանսական կամ անգլիական կամ արեւմտեան յատկանշական հանգամանք մը ունին կամ չեն կրնար հայերէնի մէջ իրենց բուն համարժէքն ունենալ : մեր մէջ շատերը «սալոն»ին «դանլիծ» կամ հիւրասրահ», «օրերա» լին «նուազաթատրոն» կամ «զուսաներգութիւն», «սամովար»ին «ինքնանու» կամ «հեշտանու», «տոսմ»ին «թատրերգութիւն» կամ «բանագործութիւն», «պուլվար»ին «լայնափողոց», «բարթման»ին «բնակարան», «մէսթ»ին «չարժում» կամ «չարժումք» կ'ըսեն, դորձածելով թարգմանուած բաներ որոնք բուն իմաստը չեն տար ու երբեմն ալ ծիծաղելի են ինքնին : Պէտք է ջանալ անշուշտ որ լեզու մը իր ինքնութիւնը, մաքրութիւնը պահպանէ եւ չողողուի, չապակամուի օտար

տարրերով. բայց օտար սարրերու դէմ երբ
այդ սարրերը անհրաժեշտ են՝ զուրը բո-
լորովին գոց պահելը անխելքութիւն է, եւ
հակառակ լեզուական օրէնքներուն. այդ մաք-
րամոլութիւնը կ'ազգատացնէ եւ կը մոմի-
ացնէ զայն. մեր հին լեզուն, որմով կը պար-
ծենանք, անհամար բառեր փոխ առած է՝ նոյ-
նութեամբ՝ պարսկերէնէն եւ յունարէնէն՝
(ոտտիկան, սպարապետ, ասպաստան, դժոխք,
հրեշտակ, դեւ, հորիզոն, սիւղորայ, տաղանդ,
մեղեդի, թէատրոն, եթեր, այեր, ամպիոն, ստա-
մոքս, գոհար, սաղրապ, ասպար, սիւնհողոս, եկե-
ղեցի, եպիսկոպոս, մարտիրոս, բարբարոս):
Այդ բոլորը այնպիսի բառեր են որոնց ճիշդ
համարժէքը չկար հայերէնի մէջ կամ կարելի
չէր դարձնել, եւ կամ որոնց մուտքը հայերէնի
մէջ՝ զայն խաթարելու բնութիւնը չունէր.
Երբեմն բառը՝ հայերէնի մէջ ընդունուելով
զայն քիչ մը փոփոխած, հայացուցած են, եւ-
րեմն ալ նոյնութեամբ ընդունած եւ պահած
են. իսկ անհամար բառեր «թարգմանած» են
յունարէնէն, վերացեալ բառերը մանաւանդ,
զորոնք աններելի պիտի ըլլար նոյնութեամբ
փոխ առնել հայերէնի պէս լեզուի մը մէջ՝ որ
բարդութեանց եւ անհամարաց այնքան զիւ-
րութիւն ունի: Մեր Սոկրատէսը վարպետնե-
րէն աւելի մաքրամոլ ըլլալու ելլելը զէվդե-
կութիւն է պարզապէս: Պէ՛տք է եւրոպական
լեզուներէն, ու մանաւանդ ֆրանսերէնէն՝ որ
մեր մէջ ամենէն տարածուած լեզուն է, փոխ
առնել այն բոլոր բառերը որոնք եւրոպական
քաղաքակրթութեան, բարձրուն, արհեստա-
գործութեանը, արուեստին մասնաւոր կնիքը
կը կրեն. այսպէս արդէն «չիք, սալօն, օբերա,
վոալիլ, բեվոլվէր, մոսէոն, ապսէնթ, վալս,
փոլքա, մատիս, ֆրաք, բըտէնկոթ, թաքթ, բո-
մանթիկ, միստիքական, ֆիզիքական, քիմիա-
կան, մեթոս, սիստեմ, քարտ, ասփալդ» մտած
են մեր հայ բնիկներ մէջ եւ պիտի մնան.
Կրնանք դեռ գործածել՝ ըստ իս՝ առանց եր-
բեք մեր լեզուին որւոյն ու մաքրութեանը
վնասելու ուրիշ շատ մը բառեր ինչպէ՞ս՝ «տե-
քոր, բերթթուար, ժեսթ, քանափէ, ֆիաքր,
թորփիլ, սիֆոն, շալիւմօ, քաֆէ շանթան,
ֆոնտան, քլօուն, արլլ քէն, բիէրօ, մաէսթրօ,
մորֆին», եւն:

Կան բառեր որոնց թէ՛ ֆրանսերէնը (եւ թէ՛
անոր մօտ իմաստ մը տուող հայերէն բառը
կրնանք գործածել. այսպէս կարելի է տեղին
համեմատ ըսել «մօտա» եւ «նորաձեւութիւն»,
«ժէսթ» եւ «չարժում», «բէվոլվէր» եւ
«տորճանակ», «բէրէրթուար» եւ «խաղա-
ցանկ», «սրլին» եւ «միլամաղձութիւն», «պրիօ»
եւ «փայլ», «մաէսթրիա» եւ «ճարտարութիւն»:

Ոտանաւորի մէջ ֆրանսացոց strophe, couplet
եւ stance բառերուն տեղ մե՛ք ուղորակի
«տուն»ը միայն ունինք, որ maison ալ կը
նշանակէ. ինչո՞ւ չզործածել «սթրոֆ», «քուբ-
լէ» եւ «սթանս» բառերը, «տուն»ին հետ: Ա-
ւելորդ կը համարիմ՝ բազմապատկել օրինակ-
ները, որոնց շարքը կրնայ շատ երկարիլ:

Տաճկերէնի ազգեցութիւնէն վտարած ենք
արդէն ամէն ինչ որ անհաշտ էր հայե-
րէնի ոգւոյն հետ եւ ամէն ինչ որ ինքնին
անհաշտ է քաղաքակիրթ, նուրբ, յստակ ու է
լեզուի հետ: Բայց տաճկերէնի ազգեցութիւնէն
մնացած է մեր աշխարհագրաբան մէջ մաս մը զոր
պէտք է պահել: Բայց տէրբայէն յետոյ, սեռի
խնդիրը, բնութեան խնդիրը՝ բայէն, յատկա-
ցուցիչը յատկացեալէն, անհամար գոյականէն
տառջ գնելը, որ գրաբարի տիրական կանոնին
հակառակ է, ինչպէս եւ ստորոգելին բայէն ա-
ռաջ զետեղելը. որ ֆրանսերէնի կանոնին հա-
կառակ է, եւ որոնք մեր աշխարհագրաբան
հիմնական օրէնքը դարձած են, տաճկերէնի
ազգեցութեան արդիւնքն են, բայց պէտք է
պահել ատոնք որովհետեւ առաւելութիւն մըն
են յաճախ: Նմանապէս տաճկերէնէն աշխար-
հաբարի մէջ անցած են բաղմամբիւ ասու-
թիւններ, ոճեր, պատկերներ, դարձուածքներ.
Ինչպէս «կրակ կտորիլ, հողին բերանը եկաւ,
բերնին ջուրերը վազեց, սիրտը ելաւ, գործը
ջուրը ինկաւ, միսը փուշ փուշ եղաւ, խնդա-
լէն մարեցաւ, քիթէն ինկողը հազար կտոր
կ'ըլլայ», կամ ձեւեր՝ ինչպէս «տեսած մարդս»
(«մարդը գոր սեսայ»ի տեղ), «բնակած տունս»
(«տունը ուր բնակեցայ»ի տեղ), «մեկնելէս ի
վեր» («յորմէհեաէ մեկնեցայ»ի տեղ), «երթա-
լուս պէս» («անմիջապէս որ դացի»ի տեղ),
«քնանալուս տոնը» («երբ կը քնանայի»ի
տեղ), «երկու տղայ եկաւ» (փոխանակ «երկու
տղաքներ եկան»ի), «կատ-կարմիր, ճեպ-ճեր-
մակ, միս-միսակ, է՛ն մեծը, չէ՞ մի որ», եւն,
որոնք բոլորն ալ տաճկերէնին վրայէն կաղա-
պարուած են: Բայց այդ բոլորը կարելի է եւ
պէտք է պահպանել, որովհետեւ ուժեղ եւ հա-
մեղ են իբրեւ՝ պատկեր, եւ կտորակ՝ իբրեւ
քերականական ձեւ. անգլիերէնի մէջ ալ ա-
ծականը գոյականէն, եւ յաճախ՝ յատկացեալը
գամ ստորոգելին ալ բայէն առաջ, եւ Հերպերթ

Սրէնսէր այդ մասնայատուութիւնը անդիտերէնին համար առաւելութիւն մը կը նկատէ քըրանսերէնին վրայ . «քաջ մարդ, սիրտս մեծ է, սիրած մարդս, տեսնելէս ի վեր, ցաւելուս համար», աւելի ուժեղ են քան «մարդ քաջ, սիրտս է մեծ, մարդը զոր կը սիրեմ, յորմէնեւ սէ տեսայ, որովհետեւ կը ցաւեմ» : Արգէն վիճելի խնդիր մըն է դեռ թէ այդ բոլոր ասու-թիւններն ու ձեւերը իրօք տաճկերէնէն է որ անցած են աշխարհաբարին մէջ . այդ ձեւերէն շատերը կը դոնուին Հայոց միջնա-դարեան ասմկերէնին, Շնորհալիի ժողովրդա-կան լեզուով բանաստեղծութեանց, փաւստո-սի մէջ յիշուած խօսակցութեան կտորնե-րուն (որոնք ժամանակին ժողովրդական լե-զուն կը ներկայացնեն) եւ նոյն իսկ Գողթան երգերու հատուածներուն մէջ . «թալանալ ի ծաղուէ», «խնդալէն մարել» ուն զբարար ձեւն է . «նա հուր հեր ունէր» . «չատ ցաւեցոյց զմէջք», կ'ըսեն Գողթան երգերը . եւ գրա-բարը երբեմն անականը դոյականէն, յասկա-ցուցիչը յատկացեալէն, բնութեան եւ սեռի խնդիրները՝ ինչպէս եւ տէրբային՝ բայէն ա-ռաջ ալ կը գործածէ, եւ ստորագիւրն զը-րիթէ միշտ բայէն (ու տէրբայիէն) առաջ : Գրաբարի մէջ կարելի է ըսել «քաջ այր», ինչպէս «այր քաջ», «մեծ է Աստուած», ինչ-պէս «Աստուած է մեծ», «ի գնալն», ինչպէս «յորժամ գնայր», «վասն այնորիկ», ինչպէս եւ «այնու ազադաւ» կամ «այն սակս», «պալատ այնր թագաւորին» կամ «թագաւորին այնորիկ պալատ», «սիրեաց զնա» կամ «զնա սիրեաց», «եռ նմա» կամ «նմա եռ» : Կարծողներ իսկ կան թէ Տաճիկները Հայերէն փոխ առած ըլլան այդ ձեւերէն . զարձուած քներէն ու ասութիւննե-րէն շատը : Չունանասութիւն չունիմ լեզուա-կան այս հարցը լուծելու . բայց որքան ալ կա-րելի է հաւանական գտնել որ Տաճիկները բաւական տարբեր առած ըլլան հայերէն ու յունարէն լեզուներէն, ինչպէս եւ իտալերէ-նէն, անտարակուսելի է որ Հայերը, ինչպէս եւ Յոյները, խորին ազդեցութիւն մը կրած ըլ-լալու են իրենց վրայ դարերով տիրող ցեղին լեզուէն, եւ անկից առած ըլլալու են բազմաթիւ ձեւեր ու ասութիւններ : Ամէն պարագայի մէջ անվիճելի է թէ անոր ներգործութեան տակ է որ մեր աշխարհաբարը վճռապէս հակած է անականը միշտ գոյականէն առաջ, բնու-թեան ու սեռի խնդիրը բայէն առաջ, բայց գրեթէ միշտ նախադասութեան վերջը գնելու սովորութեան որ տաճկերէնին մշտական յատ-կանիչն է, մինչդեռ հին հայերէնին երկրոր-դական ձեւերէն մէկն էր միայն : Ինչ որ նոյն-քան անվիճելի պէտք է ըլլայ, սա է որ այդ

բոլոր ձեւերը անհրաժեշտօրէն պէտք է պահ-պանուին, որովհետեւ՝ տաճկերէնէն առնուած ըլլան կամ ոչ՝ անոնք ուժի եւ զեղեցկու-թեան տարբ մըն են, եւ, աշխարհաբարին ծուծը մտած, անոր հիմը կը կազմեն այլեւս : Պ. Ժան Բսիքարի, որ Յունաց մէջ պետն է յունական կենդանի աշխարհաբարը պաշտպանող գլխա-ցին, կը յայտարարէ թէ նոր յունարէնը պէտք է գրել այնպէս ինչպէս կը խօսին եւ թէ թրքերէնէ փոխ առնուած բայց ընթացիկ լե-զուին մէջ սովորական դարձած բոլոր բաները իրաւունք ունին գործածուելու արդի գրական յունարէնին մէջ . բաներու համար կը կարծեմ թէ անխոնկ պիտի ըլլար պ. Բսիքարիին չափ թոյ-լասու հանդիսանալ, որովհետեւ Տաճկահայք չափազանց մեծ քանակութեամբ թրքերէն բա-ռեր կը գործածեն խօսուած լեզուին մէջ, եւ այդ բոլոր բաները անտեղի եւ վնասակար պիտի ըլլար մեր գրական աշխարհաբարին մէջ պահպանել . բայց եւ այն ծայրայեղ մաքրամոլութիւնը որով մեր գրողները բո-լորովին կը վտարեն տաճկերէնէն մեր լեզուին մէջ անցած բոլոր բաները, անիմաստ կը թուի ինձի . Ռուսահայք աւելի թոյլատու են այդ կէտին մէջ, կը գործածեն շատ մը թրքերէն բաներ, «գարդ, ջան, աչկարս, ախմախ, օսկա-պազութիւն, ջանիլ, ջան», եւն . մեր մէջ շատ քիչերն են որ կը գործածեն գրական լեզուին մէջ թրքերէն բաները, եւ անոնք ալ կը քըն-նադատուին իբրեւ լեզուին մաքրութիւնը պղծողներ . ծայրայեղ մաքրամոլութիւնը լե-զուի մը համար մանացուցիչ է : Լեզու մը միշտ բաց պէտք է պահէ ինքզինքը արտաքին բոլոր ազդեցութիւններուն, եւ անոնցմէ քաղէ, իւ-րացնէ ամէն ինչ որ նոր ճոխութիւն մը, նոր զօրութիւն մը, նոր երանգ մը կ'աւելցնէ իրեն : Այսպէս, տաճկերէնէն առնուած բազմաթիւ բաներ կան մեր նոր հայերէնին մէջ, որոնց բուն համարժեքը անկարելի է գտնել մեր լեզուին մէջ . առոնցմէ ոմանք այնքան ար-մատացած են մեր լեզուին մէջ, որ փոքր փո-փոխութիւն մըն ալ կրած, «հայացած» են, — ինչպէս «չըլխտի (չըլքտը), երզնել, թխմել, խարճել, մշտել, քֆրել», կամ անանցներ շինած են, ինչպէս՝ «մուստառ, միտտել, միտտու-թիւն . փիս, փիսցնել, փիսութիւն . մասխարա», որ իտալերէն բառի մը թրքացումն է, «մաս-խարկութիւն . հայվան, հայվաննալ, հայվա-նութիւն . միսկին, միսկիննալ, միսկինու-թիւն . կան բաներ որ կը հոլովուին գրաբա-րածեւ հոլովումով — ձխաթը, խաթեր», եւն . կան ալ որ նոյնութեամբ անցած են մեր լե-զուին մէջ, — «գէվգէկ, լէլէշ, փաշարվա, շէպէք, քօքօլ, խըմպըլ, քէֆ, մասուլ», եւն .

այո բոլոր բառերը, ինչպէս եւ նմանօրինակ շատ մը ուրիշ բառեր, — զոր մեր մէջ գրեթէ ամենքը դեռ կը խրատչին զործածել, — կրնան գործածուիլ եւ պէտք է զործածուին: Կատակերգութեան մը, ժողովրդական բարձրը ներկայացնող վէպի մը կամ երգիծական գրութեան մը մէջ հայերէն ոչ մէկ բառ շատ անգամ այդքան ուժ չի կրնար ունենալ որքան այդ կարգի թրքերէն բառերը: Եւ լեզու մը երբ բեք պէտք չէ զոհէ, չսովորական ձգտումներով՝ որոնք անխմտա են հող, իր ուժն աւելցնող տարրեր՝ ուրկից ալ դան: Անգլիացիք որ Յըրանասացւոց կատարի թշնամիներն եղած են, հաղարաւոր բառեր փոխ առած են Թրանասցիներէն: Կարելի է դիտել որ տաճկերէնէն մեր լեզուին մէջ անցած եւ սովորական դարձած բառերը մեծ մասամբ գոհնիկ իմաստներ արտայայտող բառեր են. ատոր պատճառը բացատրելի գծուար չէ. Թուրքը իր հպատակ ազգերուն հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ ո եւ է ազնիւ տարր չէ փոխանցած անոնց: Բայց այդ բառերուն կարեւորութիւնը չի պակսիր ատով: Լեզու մը պիտք է ունենայ ամէն տեսակ իմաստներ իրենց ամէն երանդներով եւ իրենց ամենէն հզօր կերպովը թարգմանող բոլոր բառերը. եւ եթէ կան հայացած տաճկերէն բառեր որ մեր բառերէն աւելի լաւ կ'արտայայտեն գոհնիկ իմաստները, պէտք է ոգտուինք անոնցմէ:

Կատարեալ աշխարհաբարը, վաղուան աշխարհաբարը պիտի ըլլայ այն՝ որուն մէջ այս բազմազան բայց եւ հաւասարապէս կենսունակ տարրերը ամենքն ալ իրենց որոշ տեղը պիտի ունենան, իւրաքանչիւրն իր յատուկ շարժումը եւ ամենքը իրարու հետ ներդաշնակուած՝ նոր հայերէնին տիրական օրէնքներուն համեմատ: Ոչ ոք պէտք է երեւակայէ թէ այս լայն ընտրողականութիւնը չփոթութեան ու աղաւաղման կարող է առաջնորդել. ֆրանսերէնը, որ ամենէն յստակ եւ ամենէն կանոնաւոր լեզուն է աշխարհիս, իր մէջ կը պարունակէ բազմաթիւ եւ իրարմէ շատ տարբեր տարրեր, որոնցմէ ոչ մէկը չէ զոհած, բայց զորոնք բոլորն ալ գիտցած է իր հիմնական ոգոյն հետ համաձայնեցնել: Մեր աշխարհաբարը, որուն այսպէս բազմապարբ ըլլալը մին է այն գլխաւոր պատճառներէն որ զինքը արեւելեան աշխարհաբարէն աւելի ճկուն ու ճոխ կը կացուցանեն. — պիտի ըլլայ լեզու մը շատ աւելի փարթամ, դիւրաթեք ու նուրբ, երբ ա-

մենաշայն բայց եւ ճաշակաւոր ընտրողականութեամբ մը ընդունի իր մէջ գրաբարէն, թրքերէնէն, գաւառական բարբառներէն (1) ամէն ինչ որ կենդանի է, շարժուն է, ուժեղ է, գեղեցիկ է եւ կը հաշտուի իր հիմնական կազմածքին հետ:

Առարկողներ պիտի ըլլան անշուշտ թէ ընտրողականութիւնը վտանգաւոր եւ տարտամ սխտեմ մըն է, եւ թէ աշխարհաբարի սահմանները դժել եւ անոր զարգացման ուղին ճշգիւլ ուղող մը պէտք է որ կտրուկ եւ որոշ բացատրութիւններով վճռէ կէտ առ կէտ ամէն ինչ որ պէտք է պահել եւ ինչ որ պէտք է վանել, կամ ցոյց տայ այն ճիշդ չափը որով այս կամ այն տարրը կրնայ գործածուիլ. ուրիշներ ալ պիտի մտածեն թերեւս թէ լեզուին ապագային համար լաւագոյն է, փոխանակ քով քովի պահելու երկու երեք իրարմէ տարբեր ազգեցութիւններ կամ նոյն իսկ միւլեւոյն կանոնին, միւլեւոյն բառին տարբեր ձեւերը, նախընտրել անոնցմէ մէկը եւ միմիայն զայն պահել:

Երկու առարկութիւններն ալ անձիշդ են: Լեզու մը թուաբանական խնդիր մը չէ, որպէս զի միակ լուծում մը ունենայ եւ մէկ վայրկեանի մէջ կտրուկ հաշիւով մը լուծուի: Լեզու մը բարդ էակ մըն է, որ, մշտնջենական լինելութեան մը մէջ, յաւիտենաբար կը կազ-

(1) Կայ մասնաւոր ուսումնասիրութիւն մը կատարելու՝ գաւառական բարբառներէն առ նուրբ տարրերու քանակութեան եւ որակի մասին, այդ բարբառները կը պարունակեն անհուն հարստութիւններ, բռնորու, ասացուածքներու, պատկերներու տեսակէտով մանաւանդ. եւ անոնցմէ պէտք է լիարուեստ քաղել եւ մտցնել մեր գրական աշխարհաբարին մէջ, վտարելով միայն պոլսական աշխարհաբարին մէջ իրենց համարժէքն ունեցող բառերը որոնք մակարոյձներ պիտի ըլլային: Բայց քերականութեան մէջ, գաւառական բարբառներէն՝ անարժէք եւ անիմաստ պիտի ըլլար փոխառութիւններ ընել. արեւմտեան հայերէնին քերականութիւնը կը հիմնուի միւլեւոյն Պոլսոյ բարբառին վրայ, եւ տարբեր բարբառներու քերականական տարբեր ձեւերու մուտքը անոր մէջ՝ զայն կարող է աղաւաղել, անոր միութիւնը, կանոնաւորութիւնը աւերել, առանց ոեւէ իրական ճոխութիւն բերելու. այսպէս՝ անոնք որ «այս տուն, այդ անձեր» կամ «տեսածս մարդ» կը գրեն, հետեւելով գաւառական մէկ քանի բարբառներու քերականութեանը, փոխանակ գրելու՝ ըստ Պոլսոյ բարբառին՝ «այս տունը, այդ անձերը, տեսած մարդս» արեւմտեան աշխարհաբարի հաստատուած քերականութեան դէմ մեզանչած կ'ըլլան:

մուրի միշտ փոփոխուելով արտաքին ազդեցութեանց տակ . անոր մէջ կայ մաս մը զոր կարելի է ճշգրտել եւ տեւական որոշ օրէնքի ձեւով սահմանել . ատի լեզուին ողնաշարն է : որ ամուր պէտք է ըլլայ եւ միութիւն ունենայ՝ առանց որու լեզու մը թոյլ կը մնայ եւ խարխուլ . բայց ատկից անդին, լեզու մը ունի իր մշտական անձան, փոփոխման, զարգացման եւ թափազանց եղող մասը : իր միւր, ջիւղիւրը եւ իր մութը . ատոնք պէտք է ունենան ամէն ազատութիւն՝ արտաքին աշխարհին հետ հաղորդակցութեան եւ լայն, բնական, անկաշկանդ զարգացման . այդ մասին զարգացմանը համար կարելի չէ վերջնական որոշութեամբ կուռ կանոնադրութիւններ դնել . ինչպէս եւ ներքին չէ ծայրայեղ սանձարձակութիւն մը թոյլատրել անոր . ոչ պէտք է զայն չիտական կոշիկի մը մէջ սեղմել, ոչ ալ վայրենի թանձր մերկութեան մը մէջ թողուլ . կարելի է միայն ընդհանուր գծերով զարգացման ուղին նշանակել, եւ մնացեալը ձգել ճաշակին, վարժութեան ու ժամանակին : Ինչ որ խորթ է եւ իր ողուտն անհաշտ, — ըլլայ ծայրայեղ ամենընկալութիւն կամ ծայրայեղ ինքնամիտփում . — լեզու մը զայն կը վանէ անպատճառ վերջի վերջոյ, որքան ալ ժամանակաւոր ազդեցութիւններ, նոյն իսկ շատ հզօր, զայն տարածած ու տիրական զարձուցած ըլլան . այսպէս հին Հայերը չեն պահպանած Դաւիթ Անյաղթի, Մազիստորոսի եւ Ունիթորներու լեզուն . նոյնպէս արդի Հայութիւնը չէ պահպանած ոչ Գուրգէնի, Քարաքաշեանի, Պէրպէրեանի գրաբարիստոն աշխարհարարը, ոչ ալ Չերազի կամ Ռուսինեանի անբնական նորամուծութիւնները կամ Տեմիրճիպաշեանի կարգ մը չափազանցութիւնները :

Այլազան տարբերու առնթերակաց պահպանման գէ՛մ եղած առարկութիւնը, նոյնքան անիմաստ է : Այլազանութիւնը լեզուի մը համար հարստութեան աղբիւր մըն է եւ գեղեցկագիտական մեծ գորութիւն մը, երբ ներդաշնակ է եւ հալած, — ու ոչ թէ իրարու քով արուեստականօրէն փակած եւ իրարու հետ չնոյնացած տարբերու մոզայիք մը՝ ինչպէս արաբերէնով ու պարսկերէնով զարդարուած տաճկերէնը : Ոչ մէկ անպատեհութիւն չկայ որ աշխարհարարը ազատութիւն ունենայ տեղին համեմատ թէ՛ «բնական տուն» եւ թէ՛ «տունը ուր բնակեցայ» ըսելու, «թեթեւօրիկ» ինչպէս «գէ՛վգէ՛կ», «աղբառ» ինչպէս «բօբօ», «սալօն» ինչպէս «գաճիլիճ», «Ջուրի, կիկղեցիք» ինչպէս «Ջրի, կիկղեցույ» գործածելու, «մեծ է Աստուած» ինչպէս «Աստուած մեծ է» գրելու, եւ դերանուններուն բազմաձեւութիւնը

(ան, անի, անիկա եւն,) պահելու : Ֆրանսերէնը պահած է իր դիտականօրէն զարնուած բառերը (fragile, lacrymatoire, gracile, magistrat, angelique) եւ նոյն բառերուն ժողովրդական ձեւը (frère, larme, grêle, maître, ange) : կը գործածէ օտար լեզուներէ առնուած բառեր (stock, stick, opéra, maësira, brio, spleen, lazzi, lied, high-life) նոյն իմաստները մտաւորապէս արտայայտող իր բնիկ բառերուն հետ, եւ հիւսիսային լեզուներու քերականութիւնէն փոխ առնուած ձեւեր (douce était sa voix) բուն ֆրանսական ձեւերուն հետ (sa voix était douce). Իտալերէնը պահած է էական դերանուններու բազմաձեւութիւնը եւ համաձայնութեան մէջ անհուն բազմատարրութիւն մը, ֆրագաչիտութեան մեծ ձկունութիւն մը եւ պէսպիսութիւն մը, որ կը շեշտուի ոտանաւոր գրականութեան մէջ . այս մեծ օրինակները բուական են պաշտպանելու համար թէպէս : Աշխարհարարը պէտք է ընդունի իր տան մէջ ամէն եկէտը, պայմանով որ միշտ ինքը տէրը մնայ հոն եւ կեւորները հպատակեցնէ իր օրէնքներուն :

Նոր հայերէնին վրայ խօսուած ատեն, կայ խնդիր մը զոր անհրաժեշտ է ի նկատի առնել . — այն է երկու աշխարհաբարի, արեւմտեան եւ արեւելեան հայերէններու գոյութեան խընդիրը : Ահա այլազանութիւն մը որ գեղեցիկ չէ ոչ ալ օգտակար : Որքան ալ երկու աշխարհաբարները մակերեւութային տարբերութիւններով միայն կը բաժնուին իրարմէ եւ միեւնոյն լեզուն են՝ քիչ մը տարբեր հագուած, այդ երկուութիւնը, բացարձակ միութեան այդ պակասը, ցուալի ու նեղացուցիչ բան մըն է : Ատոր պատասխանատուն է քիչ մը, Ս. Նազարեանցը . այն միջոցին ուր արեւելեան հայերէնը հիմնեց, արեւմտեան հայերէնը՝ թէպէտ ոչ լոռլորովին կազմուած՝ արդէն ունէր սակայն ամբողջ գրականութիւն մը, եւ ուսանայ գրողներէն շատերը կը գրէին լեզուով մը որ շատ մօտ էր արեւմտեան Հայոց լեզուին . եթէ Նազարեանց արեւմտեան հայերէնն ընդգրկած ըլլար՝ յարգելով անոր անդրաբնիկութիւնը, այժմ միակ գրական լեզու մը կ'ունենային Հայերը . բայց Նազարեանց կ'ուզէր գրաբարախառն հայերէնին գէ՛մ պայքարել եւ անոր տեղ կենդանի, ժողովրդական լեզուն դնել . հետեւաբար գրական լեզուի վերածեց Ռուսահայոց ժողովրդական բարբառներուն ամենէն տիրականը, Թիֆլիսի բարբառը . այդպէս ըրաւ որովհետեւ կը մտածէր թէ՛ արեւմտեան աշխար-

հարարն ընդունելով, մէկ պայմանադրականութեան տեղ ուրիշ պայմանադրականութիւն մը ընդդրկած պիտի ըլլար, եւ որովհետեւ կը կարծէր նաեւ թէ արեւմտեան աշխարհարարը լաւագոյն էր քան արեւմտեանը: Ամէն պարագայի մէջ, անոնք որ այժմ կը ցաւին լեզուի երկուութեան համար եւ միացման միջոցներ կը փնտռեն, շատ արդար եւ բնական ձգտում մը կ'արտայայտեն, ձգտում մը որ ամբողջ ազգինն է, եւ որ մը անշուշտ պիտի յանգի բաղձացուած արդիւնքին: Բայց ի՞նչպէս: Այս հարցման պատասխանը այնքան դժուար է որքան անոր լուծումը դո՞ւնելու իղձը զօրաւոր: Երկու բարբառները հաւասար զոհողութիւններով միացնելու ծրագիրը անիրականալի եւ անդիտական կը թուի ինձի, որովհետեւ ամէն ճիգ որ արուեստական է, չի կրնար յաջողիլ: Երկու բարբառները, թէպէտ միեւնոյն լեզուն են՝ մանրամասնութեան տարբերութիւններով միայն, բայց այդ մանրամասնութիւններէն ոմանք այնքան յատկանշական եւ խորունկ են որ երկուքէն իւրաքանչիւրը չի կրնար զանոնք միւսէն փոխ առնել կամ իրմէ վտարել՝ առանց ինքզինքը աղաւաղելու: Միութիւնը պիտի կատարուի երկու բարբառներէն մէկուն տիրապետումով: Ինչպէս որ ֆրանսական langue d'oïlը յաղթեց, քաղաքական գերակշռութեան հետեւանքով, langue d'ocին, եւ ամբողջ Ֆրանսայի միակ գրական լեզուն դարձաւ, մեր երկու բարբառներէն մին իր զարգացման ու տարածման գերազանցութեամբ, եւ մանաւանդ քաղաքական պայմաններու ազդեցութեամբ, պիտի տիրականը դառնայ եւ ըլլայ բոլոր Հայոց միակ գրական լեզուն: Թէ երկու բարբառներէն ո՛րը պիտի տանի յաղթանակը, ատի կարելի չէ գուշակել այժմէն: Կարելի է միայն ցոյց տալ երկու բարբառներէն իւրաքանչիւրին առաւելութիւններն ու թերութիւնները: Ռուսահայերէնի «մի»ն (մի մարդ, մի քաղաք, եւն) կարծր է եւ միօրինակ, մեր «մը»ն աւելի քաղցր է եւ հալած, եւ աւելի ալ հայաղբոյժ, — որովհետեւ «մի»ն գրաբարի մէջ երբեք չի գործածուիր դոյականէն առաջ, այլ միշտ յետոյ, — մեր «մը»ն այդ ետքը գրուած «մի»ն է որուն «ի»ն «ը»ի փոխուած է: Կաւագոյն է մեր «կը սիրեմ զայն»ը քան ռուսահայոց «սիրում եմ նրան» պարսկական ձեւը: «ու»ն ինձայրայեղ տիրապետութիւնը ռուսահայոց բայերուն մէջ միօրինակութեան տարր մըն է: մեր «կը»ն, թէպէտ ինքնին աւելի խորթ քան «ու»նը, բայէն միշտ առաջ գրուած եւ անշնչո, բային կցուած ու միշտ անոր հետ լսանուած ըլլալով, նուազ աններդաշնակ կը

դառնայ քան «ու»նը որ բային վերջը կուգայ, միշտ չեշտուած, եւ չափազանց յաճախ կը կրկնուի: Մեր «անոնցմէ, որոնցմէ, իրարմէ, ով, սրոնք, որ» ձեւերը լաւագոյն են քան Ռուսահայոց «նրանցից, որոնցից, միմեանցից, ովքեր, որը» ձեւերը:

Կայ պարագայ մը ուր Ռուսահայոց «ու»նը նախընտրելի է, երբ անմիջական գործողութիւն մը ցոյց կուտայ բայը (գնում եմ, I am going) փոխանակ մեր տգեղ «կ'երթամ կոր»ին): զմայլելի է Ռուսահայոց «գնալիս» ձեւը, եւ շատ բարձր մեր «երթալու ատենը» դանդաղ եւ տաճկական ձեւէն(1), նմանապէս ներդոյական «ու»նը զոր Ռուսահայք կը գործածեն «մէջ»ին հետ փոխ առ փոխ, լաւագոյն է քան մեր «մէջ»ի միօրինակ ու տարամերժ գործածութիւնը: Մեր բայերուն ապառնին նուազ յստակ է քան Ռուսահայոցը. մենք ապառնիի համար կը գործածենք հաւասարապէս «կը» եւ «պիտի» («պիտի երթամ» եւ «կ'երթամ», եւ այս կ'երթամ»ը մրանգամայն կը նշանակէ je m'en vais եւ j'irai. Ռուսահայք ապառնիի համար միայն «կը» կը գործածեն, սահմանականին եւ անկատարին համար ունենալով «ու»նը, իսկ «պիտի»ն ունի գործածութեան որոշ տեղ. «պիտի գնամ» կը նշանակէ je dois m'en aller, այնպէս որ «ու»նը, եթէ ներդաշնակութեան տեսակէտով տկարութիւն մըն է ռուսահայերէնին համար, քերականական յստակութեան տեսակէտով առաւելութիւն մըն է:

Այս բազդատութիւնը կընայ աւելի ընդարձակ ու մանրակրկիտ կերպով կատարուիլ, բայց յօդուածիս սահմանները չեն ներեր: Համաձայնութեան մէջ, տաճկահայերէնը աւելի բազմատարր է, ճկուն եւ ճոխ, մինչդեռ ռուսահայերէնը աւելի պարզ է, կարծր, դանդաղ, (մենք կ'ըսենք սովորաբար «սիրածս», «այս ծրագրին վիժած ըլլալէն կարելի չէ հետեցնել» «ռուսահայք սովորաբար կ'ըսեն՝ «այն ինչ ես սիրում եմ», «որ այդ ծրագիրը վիժեց գորանից չէ կարելի հետեցնել թէ...»): Բառարանը, արեւմտեան հայերէնի մէջ, աւելի ճոխ է, աւելի մեծ քանակութեամբ կը պարունակէ հին հայերէնի բառեր եւ անպէտ օ-

(1) Ձանք մը կատարուած է մեր լեզուին մէջ՝ «երթալու ատենս, տեսնելու միջոցիս» դանդաղ ձեւին տեղ աւելի արագ ձեւ մը գործածելու համար. ոմանք վերջերս կը նախընտրեն գրել՝ «գիւղը հասնելուն՝ կանգ առաւ, Բարիզ երթալուս այդ գիրքը հետս կը տանիմ» (փոխանակ գրելու «երբ գիւղը հասաւ» կամ «գիւղը հասնելու ատենս». «երբ Բարիզ երթամ» կամ «Բարիզ երթալու ատենս»):

տար բառերը կը վտարէ . արեւելեան հայերէնի բառարանը աղքատ է , կը ձգտի ժողովրդական բառերը նախընտրել զբարբառ բառերէն , բայց եւ չափազանց կը խրտչի հին հայերէնի բառերէն , եւ օտար բառերը անընտիր եւ անխրտիր կը գործածէ . ժողովրդական բառերուն նախընտրութիւնը առաւելութիւն մըն է անշուշտ , բայց այդ նախընտրութիւնը պէտք չէ տարամբժ դառնայ . արդէն արժամտեան աշխարհաբարն իր արդի կացութեան մէջ նմանապէս նախընտրութիւն կուտայ՝ ընդհանրապէս՝ ժողովրդական բառերուն , բայց եւ հին բառերը կը գործածէ յօժարակամ՝ երբ պէտքն զգալի է . ուստահայերէնն ալ սկսած է օտար բառերու հեղեղը նուազեցնել :

Կարելի չէ , ըսի , երկու բարբառները արուեստակահօրէն իրարու խառնել եւ միացնել . բայց կարելի է զանոնք մերձեցնել , եւ ատով դիւրացնել այդ բարբառներուն բախտաւորագոյնին առանց զժուարութեան տարածումը ամբողջ Հայութեան մէջ : Ռուսահայ ու տաճկահայ գրողները կրնան փոխադարձաբար փոխառնել իրարմէ կարգ մը դարձուածքներ որոնք կրնան մտնել այս կամ այն բարբառին մէջ՝ առանց անոր զրոյժը յանկարծակահօրէն եւ բրտօրէն աւրելու : Այն լեզուն պիտի ըլլայ տիրապետողը որ ամենէն բազմատարրը եւ արդի հայ բարբառներու լաւ կողմերուն մեծամասնութիւնն իր վրայ միացնողը պիտի հանդիսանայ : Մեր աշխարհաբարը , որ ֆրանսերէնէն այնքան ձեւեր փոխ առած է , կրնայ եւ պարտի ուստահայերէնէն աննէլ կարգ մը ձեւեր որոնք լաւագոյն են քան իր ունեցածները կամ որոնց համարժէքը կը պակսի իր մէջ , եւ որոնց ներմուծումը կրնայ կատարուիլ առանց իր կազմածքը խախտելու : Չուտ «քերականական» ձեւերն անկարելի է փոխ առնել . այսպէս , ներգոյական «ուժ»-ը եւ անմիջական դործողութիւնն ցոյց տուող բայերու «ուժ»-ը , որքան ալ գեղեցիկ տարրեր ըլլան եւ մեր ունեցածներէն գերազանց , ինծի կը թուի թէ անհնար է որ անոնց փոխառութիւնը յաջողի տարածուիլ եւ պահպանուիլ մեր մէջ . (ներգոյական «ուժ»-ը օմանք փորձեցին վերջերս դործածել , եւ ո եւ է հետեւող չունեցան) : Բայց կարելի է , եւ հարկաւոր է , ուստահայերէնէն առնել շատ մը աստութիւններ , դարձուածքներ , բառեր , որոնք նոր երանգներ պիտի աւելցնեն մեր լեզուին եւ որոնք լեզուի մը քերականական կազմուածքը խախտելու բնութիւնն ունեցող տարրեր չեն , «լղար , ըղորդ , խփել , սիլի-բիլի , ծովիան . կուչ գալ , դիւրի ալ , ձեռք մեկնել» եւ սիրուն «հէնց»-ը — «հէնց այս վայրկեանիս» , փոխանակ «նոյն

խակ այս վայրկեանիս»-ի կամ «այս վայրկեանիս խակ»-ի , եւն , եւն :

* *

Ուրիշ խնդիր մը զոր պէտք է նկատողութեան առնել , տառադարձութեան խնդիրն է : Օտար անուններու հայերէնի վերածման մէջ Ռուսահայոց եւ Տաճկահայոց ուղղագրութիւնը իրարու անհասկանալի ըլլալու չափ տարբեր է . անոնք կը գրեն Գամբէտտա , Ջէյմս Բրայս , եւ մենք Կամպէթթա , Ճէյմս Գրայս (Gambetta, James Bryce) . տարակոյս չկայ որ անոնք են որ հայ տառերու հին հնչումը հարազատօրէն պահած են . բայց մեզի համար անկարելի է այսօր «Գամբէտտա» գրել , որովհետեւ բոլոր արեւմտեան Հայերը զայն պիտի կարդան «Kampetta» . Վենետիկի եւ Վիեննայի Միթթարեանները ատենէ մը ի վեր «Պետերբուրգ , Կարիէր , Հիւգօ» , եւն կը գրեն , եւ չեն մտածեր որ Տաճկաստանի ֆրանսերէն չգիտցող բոլոր Հայերը զատապարտուած են այդ բառերը կարգալ «Bederpourk , Garière, Huko» . արդ իրաւունք չունի մարդ՝ մասնաւորապէս արեւմտեան Հայոց ուղղուող դրականութեան մը մէջ՝ արեւմտեան Հայոց համարանձիշդ ուղղագրութիւն մը գործածել : Այդ բանը կարելի ըլլար թերեւս ընել միայն այն ատեն երբ արեւմտեան հայերէնի քերականին մէջ կանոն մը հաստատուէր որ վճռէր թէ յատուկ անուններուն մէջ բացառաբար «բ»-ը «b»-ի , «գ»-ը «g»-ի , «դ»-ն «d»-ի , «կ»-ն «k»-ի , «տ»-ն «t»-ի պէս , եւն , պէտք է արտասանուին : Բայց կը տարակուսիմ որ այդպիսի կանոն մը , նոյն իսկ եթէ հաստատուի , յաջողութիւն գրտնէ երբեք . Տաճկահայք միշտ «Վարդան»-ը Vartan , «Գրիգոր»-ը Krikor պիտի կարդան , եւ Boileau կամ Giacomo անուններուն ճիշդ հնչումը տալու համար՝ «Պուալօ» եւ «Ճաքոմօ» անուանուած պիտի ըլլան միշտ գրել խիստ մեր «բեւեռագէտ»-ն է որ իր հայերէն ժառանգած «Պասմաճեան» անունը «Բասմաջեան»-ի փոխն , զոր հայկական տառադարձութեան այդ կնճաստութիւնները չգիտցող բոլոր տաճկահայք այժմ անշուշտ կ'արտասանեն Pasmatelian) : Մէկ բան մը միայն կարելի է եւ պէտք է ընել օտար լեզուէ առնուած յատուկ անունները կամ հասարակ բառերը հայացնելու ատեն . կարելի է արտասանութեան տարբերութիւնները գոնէ մասամբ ջնջելու համար , «ք»-ին տեղ «փ» եւ ոչ «բ» կամ «պ» , «տ»-ին տեղ «թ» եւ ոչ «դ» կամ «տ» , «կ»-ին եւ «ց»-ին տեղ «ք» , եւ ոչ «գ» կամ «կ» դործածել (գրել «քանափէ» եւ ոչ թէ «գանարէ» կամ «կանա-

պէ», «Թավերն» եւ ոչ թէ «գավերն» կամ «տավերն»):


Վերջին խնդիր մը, նոյնքան եւ աւելի կարեւոր, եւ որուն վրայ մեր դրոշները դեռ չեն դարձուցած այն բոլոր ուշադրութիւնը որուն արժանի է, իգականի խնդիրն է: Հայերէնը իգական չունի, եւ ատի ոճի յստակութեան դէմ մեծ արգելք մըն է: Սօսքս բառերու սեռ ունենալուն վրայ չէ, որ աւելորդ շարք մըն է, այլ էական գերանուններու սեռին վրայ, որ անհրաժեշտ բան մըն է: անգլիերէնը բառերու սեռ չունի, բայց երկսեռ (եւ նոյն իսկ եռասեռ, իգական, արական եւ չէզոք) էական եւ ստացական գերանուններ ունի: հայերէնի մէջ միակ գերանուն մը կը ծառայէ կինն ու այրը նշանակելու: Ինչո՞ւ չզարմանել այդ պակասը: որքան ալ այդ նորութիւնը յանդուգն ըլլայ, կարելի է զայն ընդունիլ՝ որովհետեւ էական պէտքի մը գոհացումը կը բերէ: Այդ նորամուծութիւնը մասամբ կատարուած է արգէն հայերէնի մէջ եւ պահպանուած: «ուհի» իգականացուցիչ մասնիկը, որ ոսկեդարու հայերէնին մէջ շատ քիչ կը գործածուէր, տարածուած եւ սովորական դարձած է արդի հայերէնին մէջ (Ֆրանսուէի, գերասանուէի, ուսուցչուէի, պարուէի, եւն): Գերանունին համար, Ունիթորները փորձած են «նէ, ներա, նէմա», եւն ձեւը՝ միջնադարեան հայերէնի մէջ մտցնել, եւ չեն յաջողած: Գուրեան, եւ, երբեմն, մէկ քանի տաճկահայ վրայասաններ ասկից 20-30 տարի առաջ, նոյն ձեւը փորձած են դարձեալ, եւ շատ հաւանականաբար պիտի յաջողէին, եթէ «նա»-ի տեղ «ան»ը չտիրէր: Մեր աշխարհաբարին համար եւ կ'առաջարկեմ «էն, էնի, էնիկա, էնոր, էնկից, էնով, էնոնք», եւն ձեւը գործածել իշականի համար «ան, անոր»ը վերապահելով արականին: այդ «էն, էնոր» եւն ձեւը արգէն գոյութիւն ունի ժողովրդական լեզուին մէջ, «ան, անոր» ձեւին հետ: կրնանք մին իբր արական եւ միւսն իբր իգական դործածել: Աւելորդ է չէզոքի համար զատ ձեւ ստեղծել, ինչպէս եւ ստացական գերանուններու համար: ատի նուազ անհրաժեշտ է եւ դժուարընդունելի: Մեր աշխարհաբարին համար էական պակասի մը լրացումը պիտի ըլլար ատի, եւ ատանց ո եւ է խորթութիւն բերելու՝ պիտի աւելցնէր անոր յստակութիւնը: պիտի չստիպուէինք միշտ պատմուածքի մը մէջ «կին»ը, «աղջիկը» բառերը կրկնելու, կամ յաճախ կրներուն անունը տալու՝ որպէսզի չփոթութիւն յառաջ չգայ: եւ

յետոյ, իգականն ընդունելով, պիտի ապացուցանէինք թէ քսաներորդ դարու Հայերը, եթէ շատ բաներու մէջ վար են իրենց Հայկազեան կամ Արշակունի նախնիքներէն, գոնէ «կալանթըրի» մէջ կը գերազանցեն գանոնք:

ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ

Յ. Գ. — Պիտի հրատարակենք «Անահիտ»-ի մէջ այն բոլոր թեր ու դէմ կարծիքները զոր մեր պաշտօնակիցները պիտի հասնին մեզի հազորովէլ այս յօդուածին մէջ յայտնուած զազափարնէրուն եւ առաջարկութեանց նկատմամբ:

ՎՐԻՊԱԿ. — Էջ 95, սիւնակ ա. տող 16, «վիզի պէտք է ըլլայ «միտքի»: նոյն սիւնակ, տող 34 «Գուլթի», պէտք է ըլլայ «Գուլթի»): Էջ 98 սիւնակ բ. տող 11, «նոյն ատեն», պէտք է ըլլայ «նոյն ույն»: նոյն սիւնակ, տող 17, «քաղաքակրթութեան», պէտք է ըլլայ «քաղաքակրթութիւն»): Էջ 100, սիւնակ ա. տող 47, «թէ՛ ֆրանսերէնը», պէտք է ըլլայ «թէ՛ ֆրանսերէնը (կամ իտալերէնը, անգլիերէնը, եւն)»: նոյն էջ, սիւնակ բ. տող 4, «ինչու գործածել», պէտք է ըլլայ «ինչու շարժածել»: նոյն սիւնակ, տող 14, «սերբայէն», պէտք է ըլլայ «տերբայիէն»: նոյն սիւնակ, տող 36, «քննադատ ատենը», պէտք է ըլլայ «քննադատ տենա»: նոյն սիւնակ, տող 46-47 «յասակացեալը յատկացուցիչէն առաջ» պէտք է ըլլայ «յատկացուցիչը յատկացուցիչն առաջ»:



(ՆԱԴՍՕՆԻՑ)

Երազում տեսայ գիշերուայ երկինք
Եւ նորա վերայ շողջողուն աստղեր,
Եւ բաց-կապուտակ լըճակի վերայ
Բաց-կանաչագոյն լացող ուռիներ:
Եւ ամբողջ թաղուած եղբեւանու մէջ
Քո աւելը եւ դու լուսամտի մօտին,
Սպիտակ ըզգեստով գլուխըդ խոնարհած,
Գեղեցիկ, գունաւ, գէճքըդ տխրազին...
Դու լալիս էիր... Եւ գոհար շիթեր
Ցայտում էին քովըճիտ աչերից,
Եւ արտօսը էին թափում սէզ վարդեր,
Սոխակի ողբն էր լըսում թրփերից:
Եւ իւրաքանչիւր նոր արցունքի հետ,
Ստորեւ քաղցրաբոյր կանանց պայտիզում,
Լուսատրտիկը վառում էր առկայծ,
Եւ ջինջ երկինքը ասող էր գըլորում:
ԳՐԻԳՈՐ ԱՆՈՓԵԱՆ

Ժընեւ, 28 ապրիլ, 1902



ԵՐԵՔ ԿԻՆԵՐՈՒ ՊԱՏՄ ՈՒԹԻՒՆԸ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՇԵՔԵԱԹ)

Հի՛ն, չա՛տ հին ժամանակներն էր. քաջուրու եւ կտրիճներու ժամանակը. մեր աշխարհը անուանաւոր էր, մեր ազգը՝ հզօր. մեր թագաւորները զօրեղ էին. — ասեմներ կ'ըլլար որ անոնք իրենց թշնամի թագաւորներէն մէկ քանին գերի բռնելով տախտակներ կը ծակէին անոնց վզովը կ'անցընէին եւ իրենց զան հոն բարձրացուցած պտոյտի կ'ելլէին:

Ազատ էր մեր ժողովուրդը. խաղաղ էր մեր աշխարհը. բերքը առատ կ'ըլլար. մէկ ցանոցը հազար կը հնձէր. աշխատանքը վաստակով կը պսակուէր. խոպան տեղ մը չկար. ամէն կողմ գիւղեր, քաղաքներ կը բարձրանային. զաշտուրը, արօտները, մարդագետիկները կանանչութեան մէջ կը ծփային. — հիմակուան մեր տեսած աւերակ վանքերը, դաշտերու եւ կիրճերու մէջ գտնուող իրենց կիսափուլ պատերովն ու խարխուլած ծակոտած առաստաղներովն իսկ զեռ հոյակապ շէնքերը՝ անկելանոցներ, հիւրանոցներ, պատասպարաններ էին ճամբորդներու, օտարականներու, անկարողներու. հիմակուան կռէճ, չոր ու խոնձած լեռները անտառներ էին՝ օշիի, դղբի, բամբի, հացիի ծառերու. հիմակուան ապաստօտ լեռները բողբանոցներ էին: Ուրախ էր հայ ժողովուրդը՝ երջանիկ, անդորր: Գոհ էր իր թագաւորներէն որոնց համար սէր ու պաշտամունք ունէր. թագաւորները բարեխիղճ էին, իրենց երկրի եւ ժողովրդի օգտին համար հոգ կրող: Ապրելու, կեանք վարելու ժամանակը այն ժամանակն էր:

Թագաւորներն իրենց ժողովրդի կացութեան, անոր պէտքերուն, անոր ցաւերուն մօտէն ծանօթանալու համար, չբաւականանալով իրենց ականջը հասած տեղեկութիւններէն՝ աղքատի կամ օտարականի հագուստով իրենց պալատէն դուրս եկած՝ ժողովրդի խաւերուն մէջ կը մտնէին, անոր կացութիւնը, անոր վիճակը իրենց աչքովը տեսնելու:

Թագաւորներէն մէկը, այսպէս, օր մը, իր պալատականներէն մէկուն հետ, մուրացկանի հագուստով շրջելու էր ելած: — Գիշեր էր,

ամէն մարդ՝ քնացած, բոլոր դուռներու փականքները դուռած, ու տուներու մէջ լոյսի յետին պէծը ինկած մարած էր: Թագաւորը իր պալատականին հետ, աղքատի հագուստով, մուրացկանի ցուպը ձեռունին եւ պաշարի յրմպանը կանակներուն վրայ՝ փողոցները կը շափէին, երբ իրենց անցած փողոցին մէջտեղը մարդ մը նշմարելով՝ որ գէմի լուսամուտէն մարմնոյն կիսովը դուրս ինկած կնկան մը հետ կը խօսէր՝ կանգ առին, պատի մը տակ քաշուեցան եւ զանոնք մտիկ ըրին:

— Եկո՛ւր, եկո՛ւր, նե՛րս եկուր, իջնամ դուռը բանամ՝ ներս եկուր... — կ'ըսէր լուսամուտէն կիսը:

— Ձե՛մ դար, չպիտի դամ. վտանգաւոր է, ամուսինդ ներսն է, կը վախնամ, չեմ գար, — կը պատասխանէր փողոցէն՝ մարդը:

Թագաւորը կիկտած, իր ընկերոջ հետ պատին սղմուած՝ կը լսէր խօսակցութիւնը:

— Էրիկս ուրիշ սենեակ մը պառկած՝ քնացած է. վտանգ չկա՛յ, մի՛ վախնար, նե՛րս եկուր... — կը թախանձէր կիսը:

— Ձե՛, չեմ գար. կը վախնամ... յետոյ՝ այս զրութիւնը լաւ չէ, օր մը չէ օր մը պիտի տուժենք, մինչեւ՝ երբ շարունակեմ այսպէս. եթէ կը սիրես զիս՝ սպաննէ՛ էրիկդ եւ երկուքս ամուսնանանք, — կ'աւելցնէր մարդը:

Թագաւորը, այս խօսակցութենէն փշամղած, պատե՛պատ քսուելով՝ իր ընկերոջը հետ կը յառաջանար աւելի մօտէն լսելու համար:

Կիսը, սպասուած մը յետոյ, կը շարունակէր.

— Լա՛ւ, գիտեա որ քեզ կը սիրեմ, գիտես որ քու սիրուդ համար քսան ամուսինի կեանքն ու արեւը կը մարեմ՝ ինչպէս թէ ճրագի մը լոյսը խամբէի, եւ գիտես որ քու եղունգդ ամուսնուս գլխուն հետ չեմ փոխեր. կը խուտանամ սպաննել զայն՝ քեզի հետ ամուսնանալու համար. միայն յարմար առիթին սպասելու է. ուրեմն եկո՛ւր, ներս եկուր, իջնամ դուռը բանամ. ներս եկուր:

— Ձե՛, — կը պատասխանէր փողոցին մէջ կանգնողը յամուսնութեամբ, — չէ՛, ներս չեմ գար, եթէ զիս կը սիրես, ամենէն յարմար տեանը հիմա է: — Գնա՛, կտրէ՛ ամուսնիդ գլուխը, բեր լուսամուտէն ինծի վար նետէ, եւ այն ատեն ես գլուխը կ'առնեմ ու ներս կուգամ, այն ատեն իրարու հետ անվախ կը զբօսնուր:

Թագաւորը մտիկ կ'ընէր իր ընկերոջը հետ, վայրկեան մը յետոյ կիսը կ'աներեւութանար

ու փողոցին մէջ կանգնող մարդը անշարժ կը սպասէր . քիչ վերջը կինը նորէն լուսամուտը կ'ելլէր, մէկ ձեռքը արեան մէջ թաթախուած դանակ մը ու միւս ձեռքը արիւն ժայթքող գլուխ մը՝ զոր ահանջէն բռնած էր . գլուխը փողոցին մէջ կը հօլընտէր , ու նորէն կը շարունակէր .

— Ահաւասիկ էրկանս գլուխը . խնդիրքդ կատարեցի . ա'լ ոչինչ չունիս բսելիք . հիմակ ա'լ կուգաս , իջնամ դուռը բանամ . . .

Փողոցի մարդը նրկու քայլ կ'առնէր եւ դեռ ջղաձգութեամբ տրորուող գլխուն առջևը կանգնած , ոտքովը զայն երէրցնելով , աչքերովը զայն զննելով՝

— Չէ' , չըրացաւ , դեռ վտանգ կայ ներս չեմ գար , դուռը բանալու մ'իջնար՝ ներս չեմ դար . տասնուհինգ տարեկանակ տղադ կայ՝ որ կրնայ արթննալ , հօրը մահը կ'իմանայ եւ այն ատեն վտանգը՝ այս ոճիրին հետ՝ ահաւոր կը դառնայ . — կը պատասխանէր :

Թագաւորը մտիկ կ'ընէր :

Բորբոքած կինը , վայրկեան մը շուարած , նորէն կը շարունակէր .

— . . . Մի՛ ընէր . . . գիտես որ քեզ կը սիրեմ , սէրս փորձել կ'ուզես . կ'ուզես որ որդի՞ս ալ սպաննեմ . . . կը սպաննեմ , զայն ալ կը սպաննեմ . . . Բայց թող որ այս արիւնոտ ձեռքերով քու սէրդ վայելեմ . ամուսինս մորթեցի՝ եկուր քեզ համբուրեմ . . . Եկո՛ւր , իջնամ դուռը բանամ՝ ներս եկուր , յետոյ որդուս մասին կը խորհնք : Քնած է ան , եթէ արթննայ , եթէ աղմուկ հանէ՝ այն ատեն զինքը կը սպաննեմք . եւ այն ատեն զո՛ւն կը սպաննես , որովհետեւ ես մայրն եմ անոր . . . ես չեմ ուզեր , չ'եմ կրնար որդուս արիւնը թափել . . . Եկո՛ւր , ներս եկուր , իջնամ դուռը բանամ՝ ներս եկուր . . .

Թագաւորը մտիկ կ'ընէր :

Մարդը կը պատասխանէր փողոցէն .

— Չէ' , չէ' , վտանգաւոր է , չեմ դար . եթէ կ'ուզես , եթէ զիս կը սիրես , դնա՛ սպաննէ որդիդ , բե՛ր անոր գլուխն ալ հոս նետէ , այն ատեն գլուխները կ'առնեմ ու վեր կուգամ . . .

Կինը կը տատանէր՝ լուռ , անշուկ . անոր սրտին մէջ սեռական եւ մայրական սէրերը կը մարանչէին . . . անոր հողին խռոված էր . մոլոր մտքով լուսամուտէն ներս քաշուեցաւ , ու արիւնոտ դանակը իր հետ աներեւութացաւ . . . անոր քայլերն իր որդու անկողնին առջևն էին տարած զինքը , ու ետ կը դառնար՝ քանդրաւոր զլուխ մը գրկած . . . Լուսամուտը

ելլելով , գլուխը վրձամէն բռնած փողոցը կը սահեցնէր . . .

— . . . Տղուս գլուխը . . . ա'լ հիմա վախ չունիս , ա'լ հիմա վտանգ չկայ , ա'լ ներս կուգաս , իջնամ դուռը բանամ . . .

Թագաւորը մտիկ կ'ընէր .

Փողոցին մէջ կանգնող մարդը այդ գլուխն ալ զննելով , ոտքով հրոշակելով՝ կը պատասխանէր .

— Չէ' , չէ' , չէ' , չեմ դար : Դուն որ տարինեքէ ի վեր կեանքիդ ընկերացող ամուսինդ սպաննեցիր , դուն որ քու մատաղաջ զուակդ մորթոտեցիր , զո՛ւն որ՝ զայն ինն ամիս փորիդ մէջ սնուցած , տարիներով ձեռքերուդ ու ծունկերուդ վրայ մեծցուցած . անոր քու ծծիդ կաթը տուած , զայն խնամած էիր՝ սպաննեցիր , ինձի հա՛ար՝ որ օտար մըն եմ , ոչնչով քեզ կապուած , պատահապէս ծանօթացած , ինչպէ՞ս չկասկածիմ թէ օր մը , եւ նոյն իսկ ժամ մը յետոյ , երբ քու սիրոյդ յագուրդ դառնա՛մ զիս ալ պիտի չսպաննես : Չէ' , չէ' , չէ' , չեմ դար , դուռը բանալու մ'իջնար . . .

Փողոց կանգնողը կ'առնէր կը քայլեր՝ ածապարանքով , վազելով՝ կնոջմէն փախչելու համար : Կինը արիւնոտ ձեռքերով իր դէմքն ու գլուխը ձեծելով , ծամերը փետտելով՝ ուշաթափի պէս ներս կ'իջնար :

Թագաւորը մտիկ կ'ընէր՝ մտտ ի բերան , սահմուկած , պալատականին նայելով : Երկուքն ալ կը դողային դէպքին ազդեցութեան տակ : Վայրկեան մը յետոյ՝ Թագաւորը իր ընկերոջ հետ՝ գացին գլուխները վեր առին . եւ թագաւորն ինքը , հոն լծացած արեան մէջ իր ձեռքը թաթխելով զարկաւ կնոջ գրան շէմքին վրայ՝ զայն որոշելու համար , եւ հետեւեցաւ փողոցին մէջ կանգնած խօսող մարդուն , բայց անոր պէճը կորսնցուցած , փողոցները թափառելով հաղիւ պայտար հասաւ :

Քիչ յետոյ իր վայնասունէն սթափած կինը , արիւնլուայ պանակն ի ձեռին , փողոցը կը կը նետուէր իր սիրականը գտնելու , միեւնոյն արիւնքերան դանակով զանի ալ մանրելու : Բայց դուռը բանալով կը տեսնար արեան լճակներ միայն . գլուխներն ու իր սիրականը չկային . աչքով փողոցին երկայնքը նայեցաւ , ու չէր մնացեր . ձեռքերը գլխուն զարկաւ ու աչքերը գոցելու վստիկ վայրկեաններուն մէջ , իր ոճիրները տեսաւ . . . յետոյ մօտեցաւ արեան լճակներուն ու անոնց մէջ նայեցաւ իր դիմագիծը տեսաւ հոն աստղերուն եւ լուսնին ազօտ ցլման հետ . . . պուտ մը

արցունք չեկաւ անոր աչքերէն, անոր սրախ
անկիւններէն ցաւի պուրակ մը չփրթաւ,
ու զղջումի ու կարեկցութեան գաղափարը
զինքը չցնցեց, ու մայրական ու ամուսնական
սէքերը չինքը չսթափեցուցին, չարթնցու-
ցին՝ որովհետեւ այդ սէքերը փոխանակած էր
սիրոյ մը հետ, որ՝ ա՛լ հիմա՝ տտելութիւն էր,
այրոյ, մրկող, սպաննող տտելութիւն . . . անոր
սիրտը քար էր դարձեր, աւելի ցամաք, աւելի
չոր, աւելի կարծր՝ քան ընկան քարերը. ու-
րովհետեւ ա՛լ հիմա հոն հալած, հիւժած, սպա-
ռած էին զգացումի, խանդագատանքի, խղճահա-
րութեան, սիրոյ նրբանիւթ հիւլէները, որով-
հետեւ ա՛լ հիմա հոն տարածուած, ծաւալաւո-
րուած կ'իշխէր Չարիքը՝ իր տտելութեան
սեւ թեւերովը իր ոճիւրի կարմիր մանգաղու-
վը . . . հիմակ ան ա՛լ միայն զինքը կը մտածէր.
կարծեց թէ իր սիրականը գլուխները առած իր
հետը տարած էր՝ իր դէմ նոր խաղ մը խաղալու
մտադրութեամբ, եւ աճապարեց երթալ դի-
ակներն ու արեան հետքը ջնջելու. դռնէն ներս
մտած ժամանակ՝ դրան շէժքին վրայ արիւնով
դրոշմուած նշանը նշմարեց :

Կիները, եւ մանաւանդ անզգամ կիները,
խորամանկ ալ կ'ըլլան՝ կ'ըսուի կիներ հետու-
ցուց որ փողոցէն ուրիշ մէկը անցած, զէպքը
ականատեսած, գլուխները տարած եւ իր դուռը
նշանած ըլլալու էր : Չվհատեցաւ ընտ : Ներս
իր տունը մտաւ, թափուած արիւնէն սափորմը
լեցուց ու փողոցը ելաւ կրկին : Փողոցին երկու
կողմէն, զէպ ի վառ ու զէպ ի վեր, բոլոր դռ-
ները արեան դրոշմով նշանեց, երբեմն ձեռքը
երկու անգամ քաղխելով շեմքին, երբեմն երեք
անգամ Արիւն ցանեց փողոցին մէջ եւ պատերը
արիւնով ցրցքնեց : Երբ դուռները բոլորովին
դրոշմուեցան, գնաց փոշի գտաւ, բերաւ թափեց
իր դրան առջեւը լծացած արեան վրայ, սրբեց,
մաքրեց ու այն փոշին ալ հաւաքելով փողոցը
ցանեց ու իր գրան առջեւն ալ արիւնոտ փո-
ղոցին յարմարցուց, յետոյ դուռը գոցելով
տունը մտաւ, գնաց գետինը փորեց եւ թաղեց
անհետացուց իր էրկան եւ զաւկին գիակը՝ ա-
մէն կարգադրութիւններն ու նախազգուշու-
թիւններն ընելով :

Ատուտ կ'ըլլար : Ժողովուրդը կը տեսնար որ
Թագաւորը կարմիր ծիրանին հագած՝ պալատը
կ'երթար : Այդ օրը ուրեմն մարդ պիտի գլխա-
տուէր. Թագաւորի կարմիր ծիրանին արեան
նշան էր այն ժամանակ, կապոյտը՝ խաղաղու-

թեան, սեւը՝ սգոյ, եւ կոտնանջը՝ յաղթանակի :
Բոլոր ժողովուրդը հրապարակը խոնուե-
ցաւ. դահիճը, լայն տապարն ի ձեռին, գլխա-
տաքեմին վրայ կանգնած՝ զոհին կը սպասէր :

Թագաւորը, բոլոր պալատականներն ու նա-
խարարները կանչելով, պատմած էր իր ակա-
նատեսած անցքը եւ կնոջ պլխատման որո-
շումը յայտնած : Ձինուորները գացած էին
կնոջը փողոցը՝ արիւնով դրոշմուած տունը
գտնելու. փողոցին առաջին դուռը արեան
երկու դրոշմ կը կրէր, երկրորդը երեք, անկէ
վարինը մէկ, ու դիմացը կը շարունակուէր
նոյնպէս՝ երբեմն մէկ, երբեմն երկուք, երբեմն
երեք : Ո՞րն էր արդեօք անոնցմէ Թագաւորին
նշանակածը. զինուորները չկրցան ճշգիւ եւ ետ
զարձան. անցքը հաղորդուեցաւ Թագաւորին.
Թագաւորը զարմացաւ. ինքը անձամբ այդ
փողոցը գնաց, բայց ամէն հնարք, ամէն քրն-
նութիւն անկարող եղան երեւան հանել ոճրա-
գործ կինը : Թագաւորը զայրացաւ, զղուանք
ու ատելութիւն զգաց դէպ ի աշխարհի բոլոր
կիները, եւ դուրս գալով խորհրդարանէն, կան-
չեց մեծ նախարարը եւ իր կամքը անոր յայտ-
նելով՝ թողուց հեռացաւ քաղաքէն :

Նախարարը շուտած մնաց. Թագաւորի հը-
րամանը եղած էր, մինչև եօթն օր, մինչև իր
վերադարձը, սրէ անցընել քաղաքին բոլոր կի-
ները, եօթ տարեկանէն մինչև եօթանասուն
տարեքնոց պառաւը, առանց խնայելու նոյն-
իսկ իրեն՝ Թագաւորին՝ ձերացած մօրը, ազ-
ջիկներուն կամ կնոջը :

Սե՛ծ նախարարը հրամանին առջև դողահար,
խելքը ցնորած, հանգիստը կորսուցուցած էր :
Հրամանը ծանր էր եւ ահուկի. եթէ չկատա-
րէր, իր կեանքն ու իր ցեղը մահուան պիտի
ենթարկուէին : Այն օրը անցաւ. ախուր, վըշ-
տաքեկ, նախարարը իրջկուան իր տունը վե-
րադարձաւ : Այն ժամանակ հիմուական նման
չէր. ամէն մարդ, ժողովուրդի ամենէն յետնեա-
լը, կրնար բարձր պաշտօններու հասնիլ. նա-
խարարը ըմբիշի մը սղայ էր. իր հայրը, ծե-
րացած, դեռ կենդանի էր. անիկա դիտեց իր
որդուն զէմքը ու զգաց որ հոգ մը զանի կը
տանջէր. կանչեց զանի եւ խնդրեց անկէ որ
իր մտատանջութեան պատճառը յայտնէ. որ-
դին զլացաւ, չուղեց յայտնել՝ իր ձերունի
ձօքն ալ մտմտուք չպատճառելու համար : Ար-
տասուքը կը թափէր նախարարին աչքերէն,
սիրտը տխուր էր, կուլար եւ կ'ուզէր վիշտն իր
ներսը թաքցնել : Հայրը ըսաւ իր որդուն :

—Որդեա՛կ, ըսէ ինծի, ի՞նչ կայ, ինչո՞ւ տխուր ես, թերեւս կրնամ փարատել քու տխրութիւնդ. գիտես որ ես առաջ պարզ ըմբիշ մըն էի. թագաւորը, հիմակուան թագաւորին հայրը, իմ քաջութիւններս լսելով զիս իր ըմբիշներու մէջն առաւ. հետզհետէ պատիւս բարձրացաւ, օր մը ըմբիշներու պետը եղայ, ուրիշ օր մը նախարարութեան բարձրացայ, ես ցաւեր շատ եմ տեսած, եւ մտմտութիւնները չեն ազդեր ինծի. ըսէ՛ քու տխրութեանդ պատճառը, թերեւս գեղ ու գիւր մ'ընեմ:

Նախարարը տեղի տուաւ. պատմեց իր հօրը՝ թագաւորին հրամանը:

Մերունի ըմբիշին ղէմքը դալկացաւ, յետոյ՝ ժպտեցաւ, եւ իր որդուն գառնալով՝ ըսաւ.

—Չէ՛, պիտի չլործադրես թագաւորին հրամանը. գնա հանդիստ քնացիր. այն օրն որ թագաւորը քաղաքը մտնայ, թող կիներն ալ՝ մարդոց հետ խառնուած՝ գինքը դիմաւորելու երթան. թագաւորը թող կարմիր ծիրանին հագնի, զահիճը թող հրապարակը գլխատարեմին վրայ քեզի սպասէ. երբ թագաւորը քեզ իր առջեւը հանէ՛ գլխատուճէն առաջ, ըսէ՛ որ՝ ե՛ս քեզ արգիլեցի, եւ ըսէ՛ որ ըսելիք ունիմ իրեն. թո՛ղ գլխատէ քեզ, մեր ցեղը թո՛ղ սրէ անցնէ, բայց ըսէ՛ թագաւորին՝ թող նախ զիս լսէ: Թագաւորը չի զլանար, որովհետեւ ես իր հօր ըմբիշը, նախարարը եւ մտերիմն եղած եմ:

Այն ատեն աշխարհը այնպէս էր. մեր նախահայրերն իրենց մեծերն, իրենց հայրն ու հօր բարեկամները կը յարգէին: Պատիւներն ու պաշտօնները ծերունիներն յարգելու արգելք չէին ըլլար:

Եօթն օր անցաւ: Մուսիտիկները յայտարարեցին թագաւորին վերադարձը. քաղաքին մէջ մարդ չմնաց. աշխարհ-արարատ, քաղաքին մուտքին առջեւը կանգնած, անոր գալուն կը սպասէր. հետուէն թագաւորը երեւցաւ. բոլորը բարի գալուստ մաղթեցին ու ծնկաչոք երկրպագեցին անոր. թագաւորը կը տեսնար կանանց բազմութիւնը. բոլոր կիները՝ զարդարուած հոն լեցուած՝ իրեն բարի գալուստ կը մաղթէին. զայնացաւ թագաւորը, պալատը երթալուն պէս հազուստները փոխեց, կարմիր ծիրանին հագաւ նորէն, զահիճը գլխատարեմին վրայ ելաւ, ժողովուրդը վազեց հրապարակին վրայ խոնուեցաւ:

Պիտի գլխատէին անհնազանդ նախարարը որ թագաւորին հրամանը մերժած էր: Չինուորները գացին եւ նախարարը չղթաներով կաշկանդուած թագաւորին առջեւը բերին. թագաւորը անոր անհնազանդութեան պատճառը հարցուց. նախարարը երկրպագելով պատասխանեց.

—Արքան թող չա՛տ ապրի. արքային հրամանը խիստ էր, չկրցայ մէկէն զործադրել, իրիկուան՝ ախուր՝ տունս գացի, հայրս ստիպեց որ իմ տխրութեանս պատճառը բացատրեմ իրեն, եւ ես տեղի տուի անոր թախանջանքին առջև: Հայրս արգիլեց զիս. «Չէ՛, — ըսաւ, — պիտի չլործադրես այդ հրամանը, թող արքան վերապառնայ, քեզ գլխատէ եւ մեր ցեղը սրէ անցնէ, միայն իրմէ խնդրէ որ զիս իր առջեւը կանչէ, մտիկ ընէ ինծի»:

Արքան չկրցաւ զլսնալ. պալատականները գացին եւ ծերունի ըմբիշը արքային պալատը հրաւիրեցին:

Երբ պալատը մտաւ, արքան ոտքի ելաւ, երկրպագեց անոր՝ ծունկի վրայ եկած. այնպէս պարտաւոր էր ընել, որովհետեւ ծերունին իր հօրը մտերիմն էր եղած:

Մերունին բարեւեց արքան եւ խօսեցաւ.

—Արքան թող չա՛տ ապրի, որդիէս լսեցի արքային արձակած հրամանը եւ անոր շարժառիթը. արգիլեցի որդուս գործադրել այդ հրամանը որովհետեւ անարդար էր, եւ նախընտրեցի իմ ցեղիս բնաջինջ ըլլալը: Արքան թող չա՛տ ապրի. ըսի որ այդ որոշումը անարդար էր, բացատրեմ թէ ինչո՞ւ: Իմ արքայիս անցք մը պատմեմ իմ կեանքէս:

Թագաւորը ականջ տուաւ:

Մերունին սկսաւ:

«Ես երբ արքայի հօր ըմբիշը դարձայ, մենք ըմբիշներս շատուր էինք. քառասունի կը հասնէր մեր թիւը. օրին մէկը մենէ մին պակասեցաւ, ուրիշ օր մը՝ երկրորդը, յետոյ՝ երրորդը, չորրորդը, այսպէս երեք հոգի մնացինք. ի՞նչ կ'ըլլային մեր ընկերները՝ չէինք չիտեր. հիմա մենք մենէ կը վախնայինք. կարգը մեզի կուգար»:

Թագաւորը մտիկ կ'ընէր.

Մերունի ըմբիշը շարունակեց.

«Ի՞նչը մըն էր. հազուստներս հանած պատկած էի. դուռը ծեծեցին. վաղեցի որ բանամ. կիսս արգիլեց զիս. — «Չէ՛, ըսաւ, պիտի չերթաս՝ հազուստներդ հագիր, անանկ գնա դուռը բաց»: Հազուստներս հագայ դուռը նետուեցայ. կիսս նորէն արգիլեց. — «Չէ՛, ըսաւ, — պիտի

չերթաս՝ զէնքերդ կտպէ, անանկ գնա դւր
բաց»։ Զէնքերս կապեցի դուրը նետուեցայ .
կինս նորէն թեւէս բռնեց . — «Զէ՛ , ըսաւ ,
պիտի չերթաս՝ ձիգ պատրաստէ , անանկ գնա
դուրը բաց»։ Զիս պատրաստեցի , սանձեցի եւ
սանձէն քաշելով դրան առջեւը գացի . կինս
եկաւ այս անգամ , համբուրեց զիս ու դուրը
բանալով — «Հիմա գնա , Աստուած քեզ հետ»
— ըսաւ :

«Փողոցը ելայ , զիմացս տեսայ կտրիճ մը ,
սեւ ձի մը հեծած , աչքերը արեգակներու պէս
փայլուն ու գեղեցիկ , զէմքը լուսնակէն խոշոր
ու պայծառ . դեռ աղուամազ չունէր . կուրծքը
ուսած դուրս էր ինկած . զինեալ՝ ձիուն վրայ
կանգնած էր : Գլխէս ոտքերս զիս զիտեց . ես
ալ զինեալ էի՝ պատրաստ : Ինձի նայելէն յե-
տոյ , բարեւեց եւ ըսաւ . — «Ըմբի՞ մըն ես
դուն . եթէ ըմբիչ մըն ես , ձիգ հեծիր եւ ե-
տեւէս եկուր» :

«Բառ մը չփոխանակեցինք այլեւս . ձիս հե-
ծայ ու իրեն հետեւեցայ . քալեցինք՝ ամբողջ
գիշերը , ցորեկը . ո՞ւր կ'երթայինք , ո՞ւր կ'եր-
թայի՝ բառ մը չհարցուցի իրեն : Երկրորդ
գիշերը երբ ճամբանին կը շարունակէինք՝
տուհում մը պատեց զիս . ո՞ւր կ'երթայի , ո՞վ
էր այդ կտրիճը . ուղեցի հարցափորձել . ըմբիչի
մը համար այդպիսի հարցափորձում վարկու-
տութեան նշան էր . բայց արդեօք ինքը չէ՞ր
իմ ընկերներս անհետացնողը , եւ ո՞վ էր ինքը
որ առանց ինչ ներդրութիւն ինդրելու , կամ
առանց ինձի հետ չափուելու՝ առջեւէս կը քա-
լէր . որոշեցի զինքը սպաննել , աղեղս լարեցի
ու նետս գնաց իր մէջքին դպաւ . զրահաւոր-
ուած էր , նետս զետիւր ինկաւ , իսկ ինքը ա-
ռանց զգալու ճամբան կը շարունակէր . երկ-
րորդ անգամ աղեղս լարեցի , նետս թռաւ ,
այս անգամ կտրիճը վերահասու եղած էր . եւ
տին դարձաւ եւ ինձի ըսաւ . — «Կը քնանա՞ս
զէնքերուդ ծայրերը մէջքիս կը պոչին : մի՛ քը-
նանար , քալելնք» : Սոսկացի՝ : Ա՛լ լուս ու մութն չ
իրեն հետեւեցայ :

«Քալեցինք օրերով , գիշերներով , շարաթ-
ներով : Ընդարձակ դաշտի մը մէջ աղօթատան
մը հանդիպեցանք . կտրիճը ձիէն վար իջաւ .
եւ ալ ձիէս վար իջայ . կտրիճը զինաթափ ե-
ղաւ , զէնքերն ինձի յանձնեց եւ ըսաւ . — «Զիս
բռնէ մինչեւ գամ , հոս աղօթելու պիտի մտու-
նամ» : Յետոյ զրպանէն բանալի մը հանեց ,
զուռը բացաւ ու ներս մտաւ : Ժամէն աւելի
հոն մնաց , երբ դուրս եկաւ՝ կ'արտասուէր ,
կը հեկեկար , կ'ողորար . ի՞նչ ունէր , ի՞նչ ունէր
հոն , ինչո՞ւ կուլար , չէի գիտեր . աչքերը սըր-
բեց , ձիւն հեծաւ ու նորէն ճամբան ձեռք ա-
ռինք — «Քալե՛նք» , ըսաւ . ու քալեցինք :

Քալեցինք օրերով՝ գիշեր ու ցորեկ , քալե-
ցինք շարաթներով՝ անընդհատ : Լեռան մը
ստորտար հասանք ու լեզք բարձրացանք . այրի
մը առջեւ գանգ առաւ կտրիճը , ձիէն վար իջաւ ,
եւ ալ վար իջայ : կտրիճը զէնքերը զննեց ,

հագուաները շողրտեց եւ երկինք նայելով՝
ինձի ժամը որոշեց . պիշեր էր , ասպղերը երկ-
նային կապտութեան մէջ կը վառէին՝ իրենց
չուրջը դեղին ցոյք մը արձակելով . — «Մինչեւ
արշալոյսի աստղին յայտնուիլը՝ զիս սպասէ ,
ըսաւ . եթէ դուրս եկայ՝ լա՛ւ , իսկ եթէ դուրս
չեկայ՝ կ'առնես ձիս , անոր վրայ ունեցած
պայուսակս որ ոսկիով եւ թանկագին քարերով
լեցուն է՝ ու կ'երթաս . եթէ դուրս գամ , քեզի
պիտի լսեմ թէ ո՞վ եմ ես , ի՞նչ նպատակ ու-
նէի , ինչո՞ւ քեզ հետս առի» . . . :

Թագաւորը ասիբերան մտիկ կ'ընէր .
Մերունի ըմբիչը շարունակեց .

«Ժամեր անցան , Արուսեակը հորիզոնէն ծա-
ղեցաւ՝ բայց դեռ կտրիճը երեւաւ չկար . ներսը ,
այրին մէջ , իրարանցում կը տիրէր . սուրբու-
ճայնը , մեղսողներու վերջին ձիւն կը լսուէր .
սպասեցի՝ որոշելով մնալ մինչեւ կոտին վախ-
ճանը , յետոյ ներս մտնալ եւ անցքին տեղեկա-
նալով հետանալ անկէ . սպասեցի ժամ մըն ալ ,
ձայնեք , սրերու շաչիւնը հետզհետէ ընդհա-
անցան , ու մէկ մըն ալ կտրիճս տեսայ , արեան
մէջ թաթախեալ , մէկ քանի թեթեւ վէրքեր
ընդունած՝ սուրը ձեռքին դուրս ելաւ . — «Հոս
ե՞ս դեռ , ինձի՞ կը սպասէիր , քաջ ըմբիչ մըն
ես դուն» , ըսաւ : Զիբերի . հեծանք ու նորէն
քալեցինք :

«Շարաթներ յետոյ հասանք այն աղօթատեղ-
ւոյն առջեւ ուրիշ առաջին անգամ անցած
ժամանակնիս կտրիճը աղօթելու մտած էր .
հոն նորէն ձիերնէս վար իջանք . այս անգամ
կտրիճը ըսաւ որ ձիերը դրան առջեւ կապենք
ու միասին ներս մտնանք . այնպէս ըրինք .
կտրիճը նորէն բանալին զրպանէն հանեց ,
զուռը բացաւ ու ներս մտաւ : Փոքրիկ խուց
մըն էր որուն մէջտեղը դրուած էր զ հոսեալ ե-
րիտասարդի մը տապանը . կտրիճն անոր նաչին
առջեւը գնաց , ծուռիկ եկաւ , լացաւ ու աղօ-
թեց . եւ ալ իր օրինակին հետեւեցայ :

«Կտրիճը աղօթէն յետոյ ինձի դարձաւ ու
ըսաւ . — «Հիմա ա՛լ ժամանակն է , հիմա պիտի
բռնեմ քեզի թէ ո՞վ եմ ես , ո՞վ է այս սեռելը ,
ինչո՞ւ հետս առի քեզ , ի՞նչ անցաւ այրին մէջ ,
ու ա՛լ իրարմէ կը բաժնուինք , որովհետեւ .
հիմա ես հոս պիտի մեռնիմ . . . » :

Թագաւորը մտիկ կ'ընէր :
Մերունի ըմբիչը շարունակեց :

«Արքան թող չա՛տ ապրի . կտրիճը զէնքերը
թափեց , զրահները հանեց , հագուաներէն մեր-
կացաւ ու մօրէնեակի զիմացս կանգնեցաւ . . .
աղջիկ մըն էր . . . »

Թագաւորը սքանչացած էր :
Մերունի ըմբիչը շարունակեց .

«Արքան յաւիտեան ապրի . կտրիճը կոյս
աղջիկ մըն էր . ինձի դարձաւ եւ իր սուրը
ինձի տալով՝ ըսաւ . — «Հիմա՛ , զիս այս սրով
պիտի գլխատես ու հո՛ս , այս տապանին մէջ ,

այս մեռած երիտասարդին կողքին պիտի պառկեցնես մարմինս, իմ ձեռքերս անոր պարանոցովը փաթթելով ու անոր ձեռքերը՝ իմ պարանոցովս, իմ կտրուած գլուխս պիտի բերես պարանոցիս վրան գնես՝ երեսերեսի ու շրթունքս շրթունքի տալով սա երիտասարդին երեսներուն ու շրթունքներուն...» : Ու գեցի մերժել ինձի եղած առաջարկը : Կոյս աղջիկը սպաննացաւ — «Քեզ ալ կը սպաննեմ, ըսաւ, եթէ բազմանքս չկատարես» : Համաձայնեցայ ու կոյս աղջիկը իր կեանքը պատմեց ինձի :

Թագաւորը մտիկ կ'ընէր :

Ծերունի ըմբիշը շարունակեց :

«Ծեռելը կոյս աղջկան նշանածն էր եղած՝ եօթը տարի առաջ սպանուած : Դիւցազնուհի կոյսը աղջիկն էր մեր աշխարհէն հեռու թագաւորի մը, այրին մէջ եղողները ուրիշ թագաւորի մը որդիներն էին եղած՝ իրենց ծառայողներով : Գիւցազնուհի կոյսը տարիներ առաջ նշանուած կ'ըլլայ այդ մեռնողին հետ որ որդին էր ուրիշ թագաւորի մը, միւս եօթը եղբայրներէն ամենէն մեծը կ'ուզէ կոյսը կնութեան առնել ու պատերազմ կը ծագի երեք թագաւորութեան մէջ : Խնամացա՛ թագաւորները իրարու հետ կը դաշնակցին, տարիներ կը տուէ պատերազմը, արիւններ կը թափուին, քաղաքներ գիւղեր, շէներ աւերակ կը դառնան, մարդագետիկներ կը խոպաննան, եւ թէեւ՝ վերջապէս դաշնակցեալ թագաւորները կը յաղթեն, բայց պատերազմին մէջ գիւցազնուհի կոյսին նշանածը կը մեռնի :

«Այրիացեալ կոյսը անկէ յետոյ կ'ուխտէ ա՛լ չամուսնանալ : Կը տապալեն եօթը որդիներ ունեցող թագաւորին դահլը, անոր աշխարհը դաշնակցեալ թագաւորները իրենց մէջը կը բաժնեն եւ եօթը եղբայրները՝ իրենց ծառաներով՝ կ'երթան հեռու աշխարհ, այդ այրին մէջ կը բնակին՝ աւազակութեամբ միայն պարսպելով : Դիւցազնուհի կոյսը, ուխտելով այլեւս հարսանեկան առաջասար չվաշելել, երկրորդի մը ոէր չտալ, ամուսնական կեանք ու աստուորը չմտնել, կը մտադրէ իր նշանածի վրէժը ինքն անձամբ լուծել : — Էրիկ-մարդու հագուստ կը հագնի, իր կոյսի գողթած ծիծերը գրահներու տակ կը պատսպարէ ու աշխարհ կ'իյնայ իր նշանածի եօթն եղբայրներ որոնելու : Կը գտնայ զսոնոնք մերձ թագաւորութեան սահմանները, յետոյ կուգայ մեր ըմբիշներէն մէկն իր հետն առնելու որ պիտի զինքը սպաննէր : Իմ երեսունեօթ ընկերներս անոր ձեռքովը մեռած էին՝ անպատրաստ անոր զիմացն ելած ըլլալուն համար : Ուրեմն ես ալ պիտի սպաննուէի՝ եթէ ուշիմ եւ աղնիւ կինս զիս նախազուշաղուցած չըլլար :

Դիւցազնուհի կոյսին խնդրանքը կատարեցի մորթեցի զինքը ու տապանին մէջ գրի՝ իր նշանածին քովը : արիւնը վազեց տապանին մէջ ու երկու զիակները արիւնով կարմրեցան, երբ անշարժացաւ հերոս աղջիկը :

անոր առած պատուէրները կատարելով գոցեցի տապանը կղպեցի աղօթատեղին, բանալին ու ձիերն աօի եւ ետ եկայ :

«Ամբաներ յետոյ տունս դարձայ : Կինս լուսամուտը կանգնած՝ ճամբաները կը զիտէր, ինձի կը սպասէր : Երբ հեռուէն զիս տեսաւ՝ վազեց եկաւ, թեւերուս մէջ ինկաւ : գրկեցինք զիրար եւ համբուրուեցանք : Կեանքս իրեն կը պարտէի :»

Թագաւորը մտիկ կ'ընէր :

Ծերունի ըմբիշն իր վերջաբանը ըսաւ :

«Արքան թող չա՛տ ապրի : Եթէ կիներու մէջ կան անզգամներ, կան նաեւ պարկեշտներ : հերոսներ, եւ այնքան կրնան ըլլալ վատ կրնան՝ որքան վատ էրիկ մարդիկ, եւ այնքան կրնան ըլլալ առաքինի կրնան՝ որքան էրիկ մարդիկ... Անհատով մը համայնքի մը վրայ գողափար կազմել կարելի չէ, անձ մը ճանչնալով անոր աղբը կամ միջավայրը ճանչցած կարելի չէ համարել, եւ ոչ ոքի յանցանքին պատասխանատու պէտք է ընդունիլ անոր սեւսին պատկանողները, եւ ոչ ոք պէտք է պատժել կամ այպանել՝ իր նախորդի գործած յանցանքին համար : Ասոր համար էր անա որ արքային որոշումը անարդար գտայ եւ իմ ընտանիքիս բնաջինջ ըլլալը նախընտիր համարեցի քան այդ որոշման իրագործումը :

Թագաւորը մտիկ կ'ընէր :

Երբ ծերունի ըմբիշը իր պատմութիւնը աւարտեց, թագաւորը ծնկաչոք անոր ձեռքերը համբուրեց, իսկ նախարարը պատուանշաններով վարձատրեց : Այն օրէն յետոյ, Հայոց աշխարհին մէջ ո՛չ թագաւորը, ո՛չ իշխանը, ո՛չ քաղաքացին եւ ո՛չ գոհնիկ շինականը, մըտքերնէն չէին անցընէր անհասներու վրայ համայնքներ չափել, կամ մէկի յանցանքին համար ուրիշներ սպաննել... :

ԱՐՍԷՆ

ԾԱՆՈՒԹԱՅԻՆ :— Այս հեքեմթը լսած եմ Հայաստանի ալ եւ ալլ շաւառներու բնակիչներէն : Թէեւ այս միւսնայն հեքեմթը սմանք թրքերէնի վերածելով՝ յարմար-գույժ են իբրեւ Սուլթան Մահմուտ իի ժամանակ պատահած իրական դէպք մը, բայց պատմութիւնը, նոյն իսկ անդադակի ակնարկով, ցոյց կուտայ որ ո՛չ նոր եւ ո՛չ մահմուտական կնիքը կը կրէ : Իմէն ոք գիտէ որ թուրքերու աշուղներէն ու առակարաններէն շատերը Հայեր են որ գրեթէ միշտ հայ պատմութիւնները թրքերէն ու քրդերէն թարգմանած կը պատմեն եւ իրենց «Դուլթ», «Գաբրիէլ», եւն անունները թրքերէն հընչումով («Դաւուտ», «Ճիպրայէլ» եւնի վերածուած իրենց գործերն իսկ մնացած են իբրեւ թուրք աշուղներու գործեր : Այս պայմաններու մէջ զգուշաւոր պէտք է ըլլալ հայկական ինքնատիպ գուտ հեքեմթները սրտելու : «Երեք կրնան» ու հեքեմթը ջիբու գաշտի մաս, Թուրքոսի լերան ստորոտը՝ Կիբրոսի երկրքը գտնուող Կերքին-Պատի գիւղը, ինչպէս նաեւ Գալլոսն լճի երկրք՝ Ալպսիէօլ գիւղը, եւ Մասիսի ստորոտի տաճկական եւ ուստական հողին վրայ բնակող հայ գիւղացիներէն նոյնութեամբ լսած ըլլալով՝ անոր գուտ հայկական ըլլալուն կասկած մը չունիմ :

ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

—o—
Թ Ա Թ Ղ
(Շար.)

Մերթ ընդ մերթ ասպատակներէն մէկուն անունը կը հռչակուի, անոր կ'երթան կը միանան ուրիշ մանրիկներ, ու շուտով ի ումք մը կը կազմուի եւ կը կոչուի միշտ իրենց պետին անունովը, որ կը հռչակուի գիւղերու եւ քաղաքներու մէջ, խաղերու եւ պարերու մէջ կ'երգուի տղայոց եւ աղջիկներու բերանները: Անունն ու ազգեցութիւնը տարածուելով, անոր պատուիրակները կ'երթան մտակայ քաղաքներէն մարդիկ կը հրաւիրեն: Թաթերը անոնց ճամբաներ ցոյց կուտան, կ'առաջնորդեն, կը հիւրասիրեն ու լրտեսութիւններ կ'ընեն: Երբ հարկաւոր կը հեռանան իրենց սահմաններէն 150-200 քիլոմէթր՝ որքան տարածուած են իրենց արջակիցները, ամէն տեղ լրտես ու առաջնորդ դռներով ու հիւրասիրուելով, որքան խմբապետին անունը կը բարձրանայ, այնքան խումբին հետեւողները կը շատնան. այնքան ատեն խումբը կը բաժնուի երկուքի, երեքի, յետոյ ճիւղաւորուելով ամբողջ այդ տարածութիւնը կը գրաւէ՝ միշտ մէկուն անունը միայն յիշուելով: Ամէն տեղ դորձակալներ, լրտեսներ ու առաջնորդներ կը թողուին, եւ այսպէս եղած կողոպուտները մէկ կողմէն կը քաշուին եւ կը կեդրոնանան ձէպէլ Բէլպի եւ Տերսունի գաւառները, այն ատեն ժողովուրդն ինքն ալ կը մասնակցի այդ ժողովուրդներուն, շահագործելով մեծ ասպատակին անունը: Հայերէն, Թուրքերէն, Թաթարներէն մասնակի մանրու խոչոր կողոպուտներ կ'ընեն, առանձին ճամբորդներ կը կեղեքեն, թշնամիներէն վրէժ կը լուծեն, վերագրելով այդ ամենը մեծ աւազակի անունը: Անհանգստութիւնն ու անասպանովութիւնը կը սկսի տիրել, բողոքադրերը կը տեղան կառավարութեան վրայ, ժողովուրդը կը թափուի պալատներու դռները, բայց ո՞վ կրնայ երաշխաւորել թէ նոյն այդ պալատի դռները կայնողներուն մէջ այդ գողերէն չկան: Կառավարութիւնը կը փնտռէ մէկը որու գլխուն են կապուած այդքան ղէպքերը, բայց այդ մէկը ո՞ւր է, անոր հետքը անյայտ է, ամէն տեղ է, եւ ոչ մէկ տեղ է:

Կառավարութիւնը առաջ դրամ կը խօստանայ այդ մէկը ցոյց տուողին կամ զարնողին, առանց սակայն երբեք վճարելու. կը պատահի որ ասպատակը կը սպաննուի. անոր կը յաջողէ երկրորդ մը, անունը կը փոխուի հանգամանքը նոյնը կը մնայ. ժողովրդի բողոքները՝ ա՛լ սպառնական կը տեղան կառավարութեան վրայ, որ կատարի ջանքեր կը թափէ եւ կը յաջողի խեղդել խռովութիւնը, մինչեւ նոր անունի մը ծագումը. միշտ այսպէս ասպատակներ կը զարնուին, կը սպաննուին, կը բանտարկուին ու կ'աքսորուին, բայց բնաւ վերջը չի գար:

Ճանչցած եմ այս կարգէն Իպին ֆրթան (կատուի տղան), Իպն Կէլ Ալին, Եռասուֆ Տաղպուլը, Մեհտիտին, Մահմուտ Գաման, Իպին Սէյթիմը, Իպն Չագմապը, եւն, որոնք յաջորդաբար այդ երկրի մէջ հռչակուած, սպաննուած, աքսորուած, բայց միշտ ալ իրենց յաջորդներն ունեցած են:

Ատեն մը կը յիշեմ որ երկուք ու կէս ամիս դադրեցան Անթաքիայի ու Սուէտիոյ յարարութիւնները որոնց միջոցը չորս ժամ է միայն: 1897 թուականին Սուէտիոյ թուրք գիւղացիները չկրնալով զիմանալ արող կացութեան, այսպիսի բողոքադիր մը մատուցին կառավարութեան. «Մենք քանի՞ Սուլթանի տուրք պիտի վճարենք, Սուլթան Համիտին թէ Իպն Չագմապին որ ամէն ամիս մենէ կուզայ հարկ կը հաւաքէ եւ դուք անկարող կ'ըլլաք մեզ պաշտպանելու:»

Թուրք կառավարութիւնը Իպն Չագմապի մէկ հայ բարեկամին արակցութեամբ թակարդը կը ձգէ զայն, որ, պատերազմելով մինչեւ փափոհչտներու սպառումը, գետին կը փռուի հինգ գնդակներու հարուածին ասի, սպաննելով երեք զինուոր: 1900ին այդ հայ մատնիչը սպաննուեցաւ Գարրիէլ Գազանճեան անունով հայ ասպատակի մը գնդակներով, որովհետեւ փորձած էր զայն ալ թակարդը ձգել: Գարրիէլ տուրի մը միայն հռչակուեցաւ. ան ալ հարկ հաւաքեց Թուրքերէն, 1901ին պաշարուեցաւ զինուորներէ, եւ մեռաւ գնդակներու կարկուտի մը տակ, սպաննելով երկու զինուոր: Գարրիէլ այն «Ճապրա»ն է որուն համար Պոլսոյ թերթերը ստախոսաբար յայտարարած էին թէ անձնատուր եղած է:

Չրպարտութիւն չէք համարիր, կը յուսամ, եթէ ըսեմ թէ շատ անգամ ալ թուրք կառավարութիւնը ընկերացած է այդ տեսակ աւազակութեանց:

«Ես ասպատակները չեմ մատնիր, եթէ հարկ ըլլայ՝ կը պաշտպանեմ ալ: Մէհտիտին չէ աւազակը, այլ զուր էք», կը պոսար բարձրաձայն:

օր մը թուրք պէյ մը կառավարութեան քա-
ղաքական ժողովոյ մէջ . եւ զայն երեք ան-
գամ ձեր ձեռքը մատնեցի, երեքին ալ արձա-
կեցիք ու եկաւ տունս տեղս արեց» :

Այդ Մէհտիտին էր որու վիզը քսանուզեց
արիւն կայ կ'ըսուէր եւ երեք անգամ զարնե-
լու հրաման եկած էր : Ես զայն տեսայ չղթա-
յակապ Հալէպու բանտին մէջ , անկէ տարի մը
յետոյ Քեսապի լեռներ աւազակութիւն կ'ընէր :

Այդ Մեհտիտին էր որ Լաթաքիայի անկաշա-
ռակեր Միւթէսարիֆի ճանկը ընկաւ , որուն
Տէլի (խենթ) Միւթէսարիֆ կ'ըսէին եւ որ
կ'ուզէր ուղղակի Պոլիս զրկել զինքը՝ զրկելով
այս անգամ անոր Հալէպի ընկերակիցները
զայն վերատին տեսելէ , բայց դժբաղդարար
այս աստիճանաւորը միայն միւթէսարիֆ էր ,
բանտապահ ալ չէլ կրնար ըլլալ միեւնոյն
ժամանակ : Բարի առաւօտ մը լուր տուին աս-
տիճանաւորին թէ բանտը պարապ էր . անձամբ
գնաց այցելելու . եւ գտաւ միայն խեղճ պար-
տատէր մը , զայն ա'լ վախեց կատաղութենէն ,
եւ բանտին վրայ ալ կը մնար ճերմակ դրօ-
շակը քաշել . . . Դրացի տունէ մը 120 մէթր
երկայնութեամբ ստորերկրեայ ճամբայ մը
բացեր էին մինչեւ բանտին տակը ուրկից Մէհ-
տիտին եւ իր 27 ընկերները փախած էին : Ծա-
րաթ մը յետոյ Միւթէսարիֆը կը ստանար
Մէհտիտի բարեւոյնը ձեպէլ Գէլպէն : Մէհտի-
տի շնորհակալութիւն կը յայտնէր անոր հի-
րասիրութենէն :

«Ա՛խ խայրնլար, խայրնլար, սիղ սինիզ էշ-
գիյա , օ տէյիլ» (ա՛խ գողեր, գողեր, դուք էք
ասպատակը, ան չէ), կը մըմար ծերունի աս-
տիճանաւորը իր ստորագաս պաշտօնեայնե-
րուն :

Թաթերը ունին նաեւ ծովային ասպատակ-
ներ , հմուտ են նաւավարութեան մէջ , ունին
չատ նաւակներ ու նաւաստիներ որոնք կ'եր-
թան հեռու ծովեզերեայ վայրեր , կ'ընեն ամէն
տեսակ առեւտուր , նշանաւոր են մաքսանեն-
դութեան մէջ , ծխախոտ կը փախցնեն նաեւ
ծովային ճանապարհներով , եւ կը գողնան , կը
կողոպտեն ու կը դառնան :

1894-95-96ի դէպքերուն շատ ծառայութիւն
մատուցին իրենց մտակայ բարեկամ Հայոց
տյղ ծովու եւ հողի մըջիւնները : Այս մասին
չատ բան կայ որ անյայտ մնացեր է հայ հա-
սարակութեան :

Անտիոքի եւ Ալէքսանտրէթի մէջ դառնում
նահանգներու Թաթերը, որ, ինչպէս կ'ըսէի ,
կէս դար առաջ հողատէրեր էին եւ երջանիկ՝
ճաճկաց ուշադրութիւնը իրենց վրայ դառնա-
լէն յետոյ խեղճերուն ճակատագիրը փոխուե-

ցաւ : Այսօր անոնք այդ երկրին ամենէն թշուառ
ժողովուրդն են , եւ՝ բոլորովին սեփականա-
զուրկ ա'լ չունին արտեր , պարտէզներ , եւ չու-
նին անգամ տուն՝ հարիւրէն ինսուսուհինգը ,
ու վարձկան գործաւորներ են այն հողերու որ
դեռ երէկ իրենց կը պատկանէին , վարձքով կը
բնակին այն տուներուն մէջ զոր իրենց հայ-
րերը կատուցած են եւ այսօր թուրք բէկին
կը պատկանի . երբ բէկը զիրենք դու-
ծէ հանէ միանգամայն տնէն ալ կը վաճակէ .
այն ատեն կ'երթան քարայրներ կ'որոնեն
բնակելու իրենց նախահարց սակորներուն հետ .
այդ երկիրը շատ կը դառնուին քարայրներ ,
հին ստորիններէ մնացած , որ օր մը պիտի ծա-
ռայէին եզեր իրեց թոռներուն իբր ճնա-
կարան :

Թուրք պէյերը անոնց տարեկան աշխատու-
թեան փոխարէն հասոյթին մէկ երրորդը կու-
տան . ամէն պարտէզ ունի տուն մը , ուր աշ-
խատաւորին ընտանիքը կը բնակի երբ կան-
չուած է այն տարին այդ պարտէզին մէջ ծա-
ռայելու . բէկը ուզած ատենը զայն կը վաճակէ
եւ անա այդ պարագաներու մէջ է որ քար-
այրներու մէջ միայն ապաստանարան կրնան
գտնել իրենց ազգականներու մասնաւոր կա-
րեկցութեամբ եւ մուրալով ապրելով :

Ինչպէ՞ս այդ կարճ միջոցին կատարու-
եցաւ ա ս ծայրայեղ փոփոխութիւնը : — Ինչ-
պէս ամէն ազգ ու անհատ , ինչպէս անասուն-
ներն ու բոյսերն ինչպէս անասնաւոր յատ-
կութիւններ իրենց գոյութիւնը պահպանելու
համար , թուրքն ալ ունի իրենը , թուրքը ծոյլ
է , տէգա եւ յիմար՝ երբ խօսքը արհեստի , աշ-
խատանքի եւ ուսմունքի վրայ է . իսկ գործու-
նեայ խելացի ու քաղաքագէտ՝ երբ խնդի-
րը յափշտակելու վրայ է :

Գործին եկած անզը թուրքը զանունք մահ-
մետական կ'ընդունի . օրինակ՝ երբ մեծամաս-
նութիւն ցուցնել կ'ուզէ քրիստոնէից վրայ ,
կամ երբ զինուորութեան կառնէ անոնց երթ-
տասարդները , եւ անոնցմէ զինուորութիւնը
նել չուզողէն «պէտէլ» 50 ոսկի կ'առնէ , 50
ա'լ բէտիֆի ժամանակ , 50 ա'լ իթիաթի
ատեն : Իսկ զատարաններու մէջ իբրեւ ոչ-իս-
լամ , իբրեւ անկրօն ու «քեաֆիր» կը նկատէ
զանոնք , հետեւաբար զրկուած այն իրաւասու-
թիւններէն որոնք յատուկ են միայն Մուհամ-
մէտի զաւակներուն :

ՊԱՂԱՒ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՇԱՊԱՆԵԱՆԻ ՏՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ . — Պ. Շապա-
 նեան իր ծովանկարներէն յիսուն հատի չափ
 ցոյց դրաւ. Ապրիլ 20էն մայիս 17, Ռիւ Ռուս-
 յալ՝ Մէլոն տէ-դ-Արթիսթի սրահին մէջ :
 Գործերը զոր ի տես զրամ է այս անգամ, ցոյց
 կուտան շատ մեծ յառաջդիմութիւն մը պ. Շա-
 պանեանի տաղանդին մէջ . իր առաջին արտա-
 զրութիւնները Այվազովսքիի ազդեցութեամբ
 սողորուած էին եւ զեռ զուրկ անձնական զը-
 րոջմէ . այժմուան ծովանկարներուն մէջ պ. Շա-
 պանեան երեւան կը բերէ աւելի ազատ, աւե-
 լի ինքնատիպ եւ աւելի կենդանի կնիք մը .
 իր այսնոր «Եղանակ»ին կողմաւորման նպաս-
 տած ըլլալ կը թուին ֆրանսական «էմբրիոնո-
 նիսթ»ներու , — մանաւանդ Մոֆրայի , Կիյ-
 եոմէնի եւ Սիւլէի , — ներդրութիւնը, բայց
 այդ ներդրութիւնը ստրկական ցոլացման
 մը պէս չէ անցած պ. Շապանեանի երանգապը-
 նակին մէջ , այլ եղած է անոր համար բեղմ-
 նաւոր դասը , կենսաբեր թելադրու. մը որ ան-
 հատականութիւնը կ'արթնցնէ եւ կը կազմա-
 կերպէ : Պ. Շապանեան կը նախասիրէ արտա-
 յայտել հանդարտ ծովուն հոգեբանութիւնը, իր
 անհուն տխրութիւններուն կամ իր թարմ
 ժպտունութեանը, իբ մեծ երազանքին կամ իր
 կանացի պջրանքներուն մէջ , ու իր երանգա-
 պնակն արդէն ունի մանաւանդ բասթէլներուն
 մէջ՝ այնքան այլազան որքան կենսախայտ
 դունեղութիւն մը՝ թարգմանելու համար ծու-
 վին հոգւոյն այդ մէկ քանի մասնաւոր վե-
 ճակները : «Գիշեր մը ովկիանոսի վրայ» ,
 «Բերիմիլի ծովախորշը» , «Բերիմիլի ծովախորշին
 մէջ վեյլին ճառագայթներ» , «Վերջալոյս» ,
 «Ձկնորսութեան նաւակներ՝ արեւու մուտ-
 քին» , «Մրրկային օդով» , «Բնութ-Ավէ-
 նի ծովախորշը» , «Պել-Իլի ժայռեր եւ մրրկոս
 ծով» , «Արեւը վերջալոյսին» , «Տոնանի նաւա-
 հանգիստը վերջալոյսին» , «Վերջալոյս» , «Ա-
 լիքը» , «Վերջին ճառագայթները» , «Իրոր եւ
 խարակները» , «Թիւրպի» , «Մոնթէքարլո» ,
 Մոնաքօի ծովախորշին մէջ» , գոհարներն
 բանաստեղծութեան եւ ճշմարտութեան :

«Նիւ Նորը Հերըլա» (30 ապրիլ) կը գրէ .
 «Պ. Շապանեան ի ցոյց դրած է Մէլոն տէ-դ-
 Արթիսթի մէջ յիսուն հատի չափ նկարներ եւ
 բասթէլներ որ կը ներկայացնեն Պրըթանի
 բնապատկերներ , Պել-Իլի , Լըքրուասիի եւ
 Թրերորի շրջակաները , ինչպէս եւ Պուլոնի
 անտառին եւ Միջերկրականի : Պ. Շապանեան ,
 անտառին նայելով, հովհասցի մըն է, բայց իր ու-
 ճը բոլորովին ֆրանսական է . իր աշխատու-
 թիւնը զեռ շատ կարծր է եւ պէտք ունի ա-
 զատ ոճի մը : Իր յաջողութեանը տարակոյս
 չունիմ, որովհետեւ իր բասթէլները ունին
 ճիշդ այն յատկութիւնները որոնք կը պակսին
 իր իւզաներկ նկարներուն մէջ , Մասնաւորա-
 պէս ուշադրութիւնս գրաւեցին «Լա քոթ Սո-
 վաթ» , «Լըբուլէն» , «Պել-Իլ» , «Կոհակ» , «Ի-

րիկուն» եւ «Չմեռուան բնակար» : որոնք շատ
 հաճելի են եւ շատ անձնագրոյժ իրենց շինուած-
 քի ձեւին մէջ :

«Մորնինկ բոսթ» (1 մայիս) կը գրէ . —
 «Պ. Շապանեան» ծովանկարիչը , ցուցադրած
 է այս միջոցիս շատ մը զարմանալի հակա-
 պատկերներ ովկիանոսի նկարադրին . իր նը-
 կարներէն եւ բասթէլներէն ոմանք կը ներ-
 կայացնեն արեւոտ հարաւին ետուն ու ժըպ-
 տուն ալիքները, այլք ցոյց կուտան անդուն-
 դին բացարձակ մեղամազձութիւնը , խիստ լը-
 ուութիւնը, յորձանուտ խոժոռ անասմանու-
 թիւնը, եւ կան ուրիշներ ալ որոնք կը ցու-
 ցենին զերազոյն խաղաղութիւնը յաւիտենա-
 կան կապոյտին իր բոլոր անվախճան խոր-
 հուրովը . պ. Շապանեան իր տարրին մէջ կը
 ցոլացնէ մարդկային հոգին՝ շատ մը շանկան
 «արդիւնքներ» յստաջ բերելով :

ՀԱՅ ԱՐՈՒՆԵՍԱԳԷՏՆԵՐԸ ՍԱԼՈՆԻՆ ՄԷՋ .
 Այս տարուան երկու Սալոններուն մասնակ-
 ցած են , հայ արուեստագէտներէն , պ պ. Շա-
 կին , Զաքարեան , Շապանեան , եւ պ պ. Ս.
 Կիրքեան , Ս. Բեկեան եւ օր . Պապանեան ու
 որոնք առաջին անգամ ըլլալով կը ցուցադրեն
 Սալոնին մէջ :

ՀԱՅԱՍՏԻՐ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԵՐ . — Պ պ. Վ. Բլե-
 մանսօ եւ Փ. տը Բրեսանսէ ընարուեսցան , ինչ-
 պէս կը յուսայինք , եւ շատ փայլուն յաջողու-
 թեամբ : Հայկական դատը երկու նոր պաշտ-
 պան պիտի ունենայ ուրիմ ֆրանսական խոր-
 հըրդարանին մէջ , երկու հօր , անկեղծ ու գե-
 տակից պաշտպաններ : Պ պ. Տընի Գոչէն , ու
 անէ , Մարսէլ Սանպա , Տ'էսթուրնէլ տը Գոնս-
 թան , ինչպէս եւ ուրիշ հայասէր երեսփոխան-
 ներ , վերընտրուած են . Ժորէս , որ Տրէյֆիւսի
 ինդրոյն հետեւանքով զրկուած էր իր աթոռէն ,
 վերստին կը մտնէ խորհրդարանը :

ՀԱՅ ԱՐՈՒՆԵՍԻ ԵՐԵԿՈՅԹԸ
 «Հայ արուեստի երեկոյթ»-ը , զոր կազմա-
 կերպած էր «Անահիտ»ի անօրէնը՝ աջակցու-
 թեամբ պ հովար Շահինի , տեղի ունեցաւ
 մայիս 29ի իրիկունը , «Սալ տէ-դ-Ակրիթիւ-
 թէ»-ր տը Ֆրանս»ի մէջ : «Անահիտ»ի Մայիսի
 թիւը ամբողջութեամբ շարուած ըլլալով, քա-
 նի մը սող միայն կրնանք նուիրել այս ան-
 դամ՝ երեկոյթին նկարագրութեանը , մանրա-
 մասնութիւնները թողլով Յունիսի թիւին որ
 քիչ օրէն կ'երևայ : Հակառակ արտակարգ-
 րէն այլանդակ օդի մը . — մրրիկ , տեղատա-
 րափ անձրեւ , կայծակ , փայլակ , եւն , — հինգ
 հարիւր հոգիի չափ բազմութիւն մը եկած էր
 երեկոյթին՝ հայ եւ օտարազգի : Պ. Տընի Գո-
 չէն , որ անձնական կարեւոր գործի մը համար
 ստիպուած էր ուրիշ տեղ մը գտնուիլ այդ ի-
 րիկունը, երեկոյթին սկիզբը եկաւ ու քանի մը
 վայրկեան մնաց՝ երեկոյթին ներկայ գտնուիլ
 չկարենալուն համար իր ցաւը յայտնու : Պ.
 Էրնէսթ Լավիս , անհանգիստ , չէր կրցած գալ
 բայց զրկած էր տիկին Էրնէսթ Լավիսը :

Պպ Մուսէ-Սիւլլի եւ Բոլ Մուսէ որ խոստացած էին մասնակցիլ երեկոյթին, չկրցան գալ, որովհետեւ այդ երեկունը «Օթիլլո» խաղալու ստիպուած էին: Տիկին Քորա-Ղարաբաբը իր իշուքն նմանապէս չկրցաւ գալ՝ որովհետեւ Վոսովի մէջ ներկայացման մը գլխաւոր դեր կը կատարէր: Տիկին Սըկոն-Վէպէր հինգչարթի ցերեկը Քոմէտի Ֆրանսէզի մէջ «Լէ Պիւրիբալ» խաղացած, յոգնած եւ արդէն առողջութիւնը խանգարուած, չէր կրցած գալ եւ հետեւեալ նամակը գրկած էր պ. Չօպանեանին.

Սերելի բարեկամ,

Կ'ապահովեմ ձեզ որ շատ կը ցաւիմ, բայց ինծի համար անկարելի է գալ այս երեկուն. շատ անհանգիստ եմ եւ շատ յոգնած: Մի՛ վշտանաք ինծի դեմ. ուրիշ անգամ դիւ կ'ունենաք. ընդունեցէք իմ այս շատ համեստ լուսնա և քիչ մը ցաւեցէք չգալուս: Սրտանց ձեզ ամենուր հնա եմ և ձեռքերնից կը սեղմեմ:

Տիկին Սըկոն Վէպէր

Տիկին Սըկոն-Վէպէր «լուսնան» յիսուն ֆըրանքի գումար մըն էր: Եւ այդ նիւթական գոհողութիւնը, զոր այդ սքանչելի կիկինը (որ հարուստ չէ) յանձն կ'աննէր իր խոստացած բարոյական աջակցութիւնը կատարել չկարենալուն զգացած ցաւը յայտնելու համար, պիտի բազմապատկէ անշուշտ խորին սքանչացումը զոր Հայերը կը զգան այդ մեծ արուեստագետին եւ մեծասիրտ Ֆրանսուէւոյն նկատմամբ որ ամէն առթիւ մէջ իր տաղանդը ի սպաս դրած է մեր դատին: Կը յուսանք որ Բարիզի Հայուհիները պիտի դիտնան ո եւ է վայելուէ ձեռով իրենց երախտագիտութիւնը յայտնել այդ տաղանդով ինչպէս հոգեով մեծ կնոջը:

Տիկ. Սիւզան Տէբրէ, հիւանդ նմանապէս, աչնութիւնը ունեցած էր Քոմէտի Ֆրանսէզի ամենէն փայլուն «ժէօն-բըմբէ»ն, Պ. Տեւտոնը զրկելու որպէսզի իր կտորն արտասանէր:

Պ. Կապրիէլ Մուրէ կարգաց հմտալից բանախօսութիւն մը Հայոց պատմութեան, գրականութեան եւ արուեստին վրայ: Օր. Տիւրկէր պ Տեառն՝ Քոմէտի Ֆրանսէզին, պ Բամօ՝ Օտէոնէն, պ Ֆիլիբ Կարնիէ, Օր. Թոմսէն, պ. Կիւլպէնկ արտասանեցին հայկական հին ու նոր բանաստեղծութեանց ֆրանսերէն թարգմանութիւններ: Պ. Սմիթեան եւ օր. Բալասարա երգեցին հայկական ժողովրդական երգեր: Երեկոյթը անցաւ ամենամեծ ոգեւորութեամբ: Օտարազգիները շատ գոհ մնացին հայկական արուեստի նմոյշներէն:

Երեկոյթին հասոյթը պիտի յատկացուի ինչպէս որոշուած էր առաջուց, Կիպրոսի հայկական որբանոցին: Տամակ ընդունողներէն մէկ մասը դեռ չէ վճարած. այդ պատճառով զուտ հասոյթին որոշ գումարը յաջորդ թիւով միայն պիտի կարենանք հրատարակել: Կը խնդրենք որ դեռ չվճարողները հաճին իրենց տոմսակին գինը զրկել Կիպրոսի որբանոցի Բարիզի խնամակալ մասնախումբին նախագահ պ. Փէլիվանեանին, 39bis, rue Châteaudun, Paris: Երեկոյթին նիւթական աջողութեանն

համար իրենց աջակցութիւնը նու իրեցին տիկին Կրունվալտ (ճնեալ Մէլլիքեան) եւ պ. Կրունվալտ, պպ. Տիգրան խան Քէլէկեան, Մ. Յ., Ս. Աշճեան, Ա. Կէվրէկեան, Ա. Շարճանեան, Յ. Բարիպեան, Ա. Պարսամեան, որոնց այստեղ կը յայտնենք մեր խորհին շնորհակալութիւնը:

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Պ. ՉԵՐԱԶ ԵՒ ԲԱՐԻԶԻ ՄԵՋ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄՐԳՍԱՂԱՓԱՐԸ. — Բարիզի Հայոց Բարեգործական ընկերութեան վերջին երեկոյթին առթիւ «Լ'Արմէնի» յօդուածին հետեւեալ տողերը մասնաւորապէս ուշադրաւ են:

«Եթէ դիւանը հայ գաղթականութեան բարոյական ու նիւթական աջակցութիւնը վայելէ, մտադիր է հիմնել, ի ՊէՏՍ ԲԱՐԻԶ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՀԱՅՅԻ, ընթերցարան մը, լսարան մը, ԱԶԳԱՅԻՆ ԳՊՐՈՑ ՄՐ, արհեստագործական դպրոց մը:

Ողորմած հոգի Հայկական Միութիւնը, զոր կործանելու «ազգասիրական» ջանքերուն այնքան ջերմեռանդօրէն աջակցեցաւ Պ. Չերազ, իրեն պիտաւոր նպատակներէն մէկն ընտրած էր աշխատել եւրոպական համալսարանական քաղաքի մը մէջ հայկական դպրոց մը հիմնելու. այն նիւտին ուր կանոնադրութիւնը վէճի դրուեցաւ, պ. Չերազ, պպ. Բայաեանի եւ Բասմաջեանի հետ, մտկոյցին հակառակօրը մը երեւցաւ Եւրոպայի մէջ, եւ մանաւանդ Բարիզի մէջ, հայկական քուէժ մը հիմնելու գաղափար. ըին, յայտարարելով թէ լաւագոյն էր այդպիսի դպրոց մը հիմնել Վիպրոս, Եգիպտոս, Պուլկարիա, Վան բայց ոչ Բարիզ: Ուրախ եմ տեսնելով որ պ. Չերազ հիմա համոզուեր է ճշդութեանն այն գաղափարին զոր բոլոր ուժովս պաշտպանեցի անցեալ տարի: Եթէ պ. Չերազի եւ իր ընկերներուն ջանքովն է որ այդ գաղափարը պիտի կրնայ իրականանալ, ես այժմէն կը շնորհաւորիմ զինքն ալ իր ընկերներն ալ՝ ով ալ լըլլան: Ի՛նչ աւելի սիրուն բան քան տեսնել հակառակորդներ որ սիրած մէկ գաղափարը հարուածելէ յետոյ, անոր շուրջը կը բոլորին եւ անոր համար կ'աշխատին: Բայց իրողութիւնն այն է որ՝ պ. Չերազ հակառակի կամ աջակցի, «այդ գաղափարը, ինչպէս կը գրէի անցեալ տարի «Անահիտ»ին մէջ, սահմանուած է իրագործուելու եւ պիտի իրագործուի, — որովհետեւ Բարիզի Հայութեան մատուց մը շնորհող անոր քով դպրոց մըն ալ կանգնելու անհրաժեշտութիւնն ըմբռնելու չափ ողջամտութիւն ունեցող անձ մըն է:

Ա. Չ.

ԲԱՆԱԿԻՄՈՍՈՒԹԻՆ ՄՐ

«Անահիտ»ի սնօբէնը հրաւիրուած է բանախօսութիւն մը արտասանել՝ յունիս 11ի իրեկունը՝ Բարիզի 10րդ քաղաքաբաժնի «Ժողովրդական Համալսարան»ին մէջ. ընտրուած նիւթն է՝ «Հայերը, իրենց պատմութիւնը, իրենց բանաստեղծութիւնը, իրենց յարաբերութիւնները Ֆրանսայի հետ»:

Բացուած է 1902 թ. բաժանորդագրութիւնը

Մ Ո Ւ Ր Ճ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

Նոր շրջան Բ. տարի

Խմբագիր-հրատարակիչ Կ. ԿՐԱՍԻՂՆԻԿԵԱՆ

Խմբագրութեան անդամներն են՝

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՅԻՍԵԱՆ եւ ԼԷՅՕ

Բաժանորդագիրնք. — Ռուսաստանում տարեկան 10 ռուբ., վեցամսեայ 6 ռուբ.: Արտասահման տարեկան 12 ռուպ., վեցամսեայ 7 ռուբ.:

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ:

Ապառիկ կամ ձոյն ոչ ոքի չէ ուղարկուած ՄՈՒՐՃ:

Հասցէ՝ Tiflis, Rédaction de la revue "Mourtch"

ԼՈՒՄԱՅ

Գրական հանդէս

Կը հրատարակուի տարեկան երկու դիրք: Բաժանորդագիրն է, երկու դրքի համար 3 ռուպլի, իւրաքանչիւր դրքին առանձին՝ 2 ռուպլի: Դիմել՝ Թիֆլիս, խմբագրութիւն «Լումայ»ի:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու դիրք: Երկու դրքի տարեկան բաժանորդագիրն է՝ 3 ռուպլի կամ 10 ֆրանք: Դիմել՝

Ervand Lalayantz, Séminaire Nersissian Tiflis, Caucase

ԱՂԻԻԻԲ

Պատկերազարդ ամսաթաթերթ

Բաժանորդագիրն է՝ տարեկան, Ռուսիոյ համար 3 ռուպլի, արտասահմանի համար 8 ֆրանք:

Հասցէն՝ Tiflis. Rédaction de la revue AGBUR

ՀԱՆԳԷՍ

ԱՄՍՕՐԵԱՅ

ՌԻՍՈՒՄՆԱԹԵԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը: Բաժանորդագիրն է, արտասահմանի համար, տարեկան 10 ֆրանք, վեցամսեայ 6 ֆրանք: Ռուսիոյ համար, տարեկան 4 ռուպլի, վեցամսեայ 2 ռուպլի 50 կոպէկ:

Դիմել՝ A la Rédaction de la Revue «Hantess» VII/2 Mechitaristengasse, 4. VIENNE Autriche

ՏԱՐԱԶ

Պատկերազարդ շաբաթաթերթ

Բաժանորդագիրն է՝ տարեկան՝ Ռուսիոյ համար 6 ռուպլի, արտասահմանի համար 15 ֆրանք: Դիմել՝ Tiflis. Rédaction du journal TARAZ

ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ Ռուսաստանի համար՝ 4 ռուպլի, արտասահմանի համար՝ 13 ֆրանք:

Կը խնդրուի բաժանորդներէն որ իրենց հասցէները մաքուր եւ անսխալ դրեն:

Դիմել՝ Rédaction de la Revue «Ararat» ETCHMIADZIN (Caucase)

ԱՆՍԼՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիջը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),
 2 տոլար (Ամերիկա), 5 բուլղլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 10 ֆր. (Ֆրանսա), 6 ֆր. (օտար երկիրներ), 1 տոլ. (Ամերիկա), 3 բուլլ. (Ռուսիա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :
 Ձեռագիրները ետ չեն դարձուիր :
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօուած եւ բաժանորդագիրն զրկել հետեւեալ հասցէին՝

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս —	Պարոն Գէորգ Մելիք-Կարապետեան
Պաքու —	» Ա. Մ. Ծոցիկեան
Կահիրէ —	» Ա. Ա. Թորգոմեան
Ռուսճուք. —	» Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ. —	» Ա. Տեմիրճիպաշեան
Պուքրէշ. —	» Արիս Լազար
Դաւրէժ. —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք. —	» Կատարեան
Բրովիտէնս. —	» Նաղարէթ Թաթէոսեան
Ֆրեզնո. —	» Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն. —	» Մանուկ Գալստեան
Ուաթըր. —	» Երուանդ Յակոբեան
Չիքակո. —	» Ա. Կարակալուրեան
Պրսթոն. —	» Կ. Յ. Բարակիւլեան